պայմանով, վոր աշնանացանի համար մուծվող պարարտացումը այնքան ել հեռու չցանցի ճակնդեղից: Ճակնդեղը այսուղ գրավում է վարելահողի 1/5-ը (20 տոկոսը):

Այսուեղ, ուր լորիացեղ բույսերը վատ բերք են տալիս, իսկ տնտեսությունը լավ խոտի կարիք ունի և միաժամանակ կերի խոտերը հաջող, բերք են տալիս, քառակաշուի ցանքաշրջանը կարելի յե վերածել քառակաշտի մի հատուկ արտաշարք հողաբաժնով: Հողը այս գեպքում բաժանվում է նույնպես 3 դաշտերի, սակայն խոտով զբաղված հողաբաժնը մի քանի տարի շարունակ մնում է խոտի տակ: Միայն այն ժամանակ, յերբ խոտը արդեն սկսեց ցածր բերքեր տալ, խոտով զբաղված հողաբաժնը մտնում է ցանքաշրջանի մեջ, իսկ խոտով զբաղվում է նոր հողաբաժնին:

Այս ցանքաշրջանը կարելի յե պատկերացնել այսպես (տես նկ. 6-ը):

ՀՆՈՎՈՐԾԻ ԴԱՅ	1	2	3	4	5
1927	մար	օզմի	օսօնիք	արօն	ձրօն
1928					
1929					
1930					
1931					
1932					

Նկ. 6.—Նորմալ բառադաշտը (5 հողաբաժիններով) մի արտաշարք խոտադաշտով.

Այս խոտադաշտը ցանքաշրջանի մեջ, ինչ խոտ ել ուզենաք, կարող է մտցվել, որինակ, առվույտ, առավատ, կորնդան և այլն, նայած տեղին, հողակլիմայական պայմաններին. խոտը կարող է կրկին հերկվել, ինչպես արդ տեսնում ենք նկարից, 4 տարուց և առաջ և ուշ:

Մեջբերված որինակներն իսկ բավական են, վորակեսղի այս կամ այն անհան փոփոխություններ մտցնելով, առանց հողաբաժնների թիվը փոխելու, կարելի լինի ընտրել ամենաձեռնտու և հարմար ցանքաշրջան: Այդ ցանքաշրջանները կարող են պիտանի լինել վոչ միայն կենտրոնական-ուժվահող նահանդներում, այլ և շաքարի արդյունաբերության ամբողջ շրջանի համար:

Խոչոր զյուղերում, վարտեղ ընդարձակ և հողոգտագործումը, և խոչոր կոլեկտիվներում պրոֆ. Ա. Ն. Մինինը խորհուրդ է տալիս ձափնդեղային ցանքաշրջանները մացնել միայն մոտակա հողերի վրա: Հեռավոր հողերի վրա կարող են կիրարկվել ցանքաշրջաններ հացահատիկների մեջ տակոսով:

Ճակնդեղային ցանքաշրջանները բազմաթիվ են և բնդ սմբին ճակընդեղը յերեմն ցանդում ենույնիսկ ցելից հետո, ցանդում և անգամ դարնանացնից, իսկ ամենից համար՝ սիսեսից, վասպից և կերի խոտերից հետո։ Այսուել արգած յերկու նկարների վրա (նկար 7 և 8) պարզորեն պատկերացված են յերկու բաժականի տարածված ցանքաշրջաններ՝ վեցաշուր, փորտեղ ձակնեղին հակացված և վարելաշողի 33

NN поме гогби	1	2	3	4	5	6
1926						
1927						
1928						
1929						
1930						
1931						
1932						

Ակ. 7.—Վեցդաշտր՝ 33 տ. նակնդեղով.

մենք բավականաչափ ունենք մեր տրամադրության տակ և վրանք չսժնամատարար եժան Են, որինակ՝ ՓոսՓորխաներ, սուպերԳոոֆատ, թոմասշլակ* . Հնարագոր և միաժամանակ սպառգործել նաև մոխիրը, ** զոմասչլակ . Հնարագոր և միաժամանակ սպառգործել նաև կործում : Վորոն իբրև փոսոր, մեղանում դարս և թափիռում և անողութ կործում :

ՄԵՆԱԿ ցանքաշը ջանների լավացումը, առանց պարարտացնան, առ-
զոր և փրկելու հողատիրոջը անհաջող բիւքերից և վնասներից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Տ. Ե. Մակարեվիչի լրացումը)

Ճաքարի ճակնդեղի ցանքսերի մուծումը Հայաստանում, ինչու և Հայաստանից դուրս, առաջացնում է հաջորդալ հացահատիկի, այն և՝ դարձնանացան ցորենի թիրքի բարձրացումը մինչև 26.5%-ը, այդ հանգարինացան ցորենի թիրքի բարձրացումը մինչև 26.5%-ը, այդ հանգարինացան ցորենի թիրքի բարձրացումը մինչև 26.5%-ը:

ԳԱՐԵԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԸ—1929 թ. ՓՈՐՁԵՐԸ

Բ Ե Ր Ք — ԼԱԲՈՐԱՏՈՐԱՅԻՆ ԱՆՈՒԲ


	ՑԵՆՏՐԱՆ ՄԱՍԻ ՄԱՐՄԵՐ	ԲԱՐՁՐԱ ՔՄԱՆ ՀԱՄԱՐ	ԲԱՐՁՐԱ ՔՄԱՆ ՀԱՄԱՐ	ԿԱՌԱՎԱՐ ՊՐԵՄԻԱ	ԲԱՐՁՐԱ ՔՄԱՆ ՀԱՄԱՐ	ԿԱՌԱՎԱՐ ՊՐԵՄԻԱ	ԲԱՐՁՐԱ ՔՄԱՆ ՀԱՄԱՐ	ԿԱՌԱՎԱՐ ՊՐԵՄԻԱ	ԲԱՐՁՐԱ ՔՄԱՆ ՀԱՄԱՐ	ԿԱՌԱՎԱՐ ՊՐԵՄԻԱ	ԲԱՐՁՐԱ ՔՄԱՆ ՀԱՄԱՐ
1. Գարենանա- ցան ցորեն	11,56	28,00	196,5	2,3	2,1	48,9	7,0	2,5	16,0		
2. Շաքարի ճակղնեղ (1534)	14,63	29,20	195,5	3,2	2,4	52,4	8,33	1,72	17,5		

Իր հերթին ճակնդեղի համար լսվազույն սարսրզն և տաղբան նուժ աշխացորենը, վորր այժմ աշխատում էն տարածել նույն վար բերում, ուր մոցվում և և ճակնդեղի մշտիութը: Ուստի վերջին պիտի զետեղի ցանքաշնորհ վերոհիշյալ մշտիութների՝ աշխատուան և գարնանացան ցորենների՝ միջն:

Այս գյուղացիուկան անսեռությունների համար, զբրսոք չունելու դպրությունը կատարվել է շաքարապարձարանի վայրից և գոնդում է Ենինականում կառուցվելիք շաքարապարձարանի վայրից և գործնք այժմ կուլեկտիվացման են յենթարկվում, ամենահարմար պիտի համաչէլիք քառաղացար մի արտաշարք հաղարաժնով (այսինքն

*) ՅԵԼ ԿՐԻՄՆԱԾՄԵՐԻ - ի, ի, Մակե.

Հնդադաշտը, տես. նկ. 6-ը)։ Այս ցանքաշրջանում բազմամյա խոտերից լենինականի շրջանում պետք է հանձնաբարել հատկապես կորնդանը, վորը ապահովում է խոտի նորմալ բերքը նույնիսկ չլուսողվող հողամասերի վրա և այսպիսով հնարավորություն է տալիս մեզ տեսանելու ջուրը գլխավորապես ճակնդեղի համար։ Լոռու դավառում կարելի յե մացնել ցանքաշրջանի մեջ առվույտի և նույնիսկ յերեք նույնի ցանքսերը։ Այս՝ արտաշարք հողաբաժին ունեցող՝ ցանքաշրջանի մեծ առավելությունները դրուղացիների համար կայանում են նրա-



Նկ. 8.—Հնդադաշտը 40% ճակնդեղով.

նում, վոր ա՞յս ամեն տարի հերկվում և ցանվում է վարելահողի միայն 4/5-ը, իսկ 1/5-ը հերկվում և ցանվում է խոտով 4-5 տարուց մի անդամ. բազմամյա լորիացեղ խոտերի (կորնդանի) մուծումը ցանքաշրջանի մեջ, բացի այն, վոր հարստացնում է հողը պղոտով, լավացնում է նաև հողի կազմվածքը, վոր շատ կարենոր է, մանավանդ յերբ ճակնդեղը ցանվում է վոռողվող հողերի վրա. դ) կոլեկտիվ տնտեսություններում ճակնդեղի ցանքերի սխմումը, վորը պարտադիր պիտի լինի:

դառնա չափարի գործարանը կառուցվելուն պես, կարելի յե հասցենել մինչեւ վարելահողի 20%-ը և առավել, առանց ցանքաշրջանի վորեւ բեկման. և դ) կորնդանով զրադված տարածությունը վոռողվելու կարիք չունի.

Լենինականի խորհրդային տնտեսությանը կարելի և առաջարկել հետեւյալ վեցդաշտյա ցանքաշրջանը՝

1-ին ՎԱՐԻԱՆՑ

Կախան շաքարագործարանը
կառ ւցելը

2-րդ ՎԱՐԻԱՆՑ

Շաքարագործարանը գործի
գցելուց հետո

1. Բազմամյա խոտեր
2. » » »
3. Աշնանացան ցուեն
4. Շաքարի ճակնդեղ
5. Սիսեռ
6. Գարնանացան+խոտեր

1. Բազմամյա խոտեր
2. Աշնանացան
3. Ճակնդեղ
4. Սիսեռ
5. Ճակնդեղ
6. Գարնանացան+խոտեր

Գործարանից հեռու գտնվող գյուղացիական տնտեսություններին կարելի յե առաջարկել, վորսկեսդի նրանք իրենց ճակնդեղը զետեղեն պարզ քառակաշտի շարքահերկ հողաբաժնում, ինչպես այդ հրահանդում է լեն. հող. բաժինը (տես նկ. 4-ը), իսկ ցանքաշրջան չունենալու դեպքում, ճակնդեղը գերագասելի յե ցանել, յերբ հողը մի յերկու տարի արդեն հանգստացել է։

7. ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՃԱԿՆԴԵՂԻ ՀԱՄԱՐ


Ինչպես արմատագոտուղներն ու պալարապտուղները, այնպիս ել շաքարի ճակնդեղը պահանջում է, վոր հողը չափելի խորը և խսմք գույն Յեթե ճակնդեղը հաջորդում է աշնանացան հացահատիկներին, խիլույն հաց հավաքելուց հետո անհրաժեշտ է հերկել գաչը թեթև կերպով 9-11 սանտիմետր խորությամբ։ Կարելի յե վորցիւ ավելի և թեթև, այն չափ, վոր արտի հարսու կարատի չափ, չուռ գա և, վորքան կարելի յե, թաղվի հողով, վորովհետեւ այդ հարսու չորացնում է հողը և արգելում աշնանային անձեռներին հողի մեջ թափանցել։ Ուշ աշունքին, յերբ ժամանակը կների, թեթև վորցիված արտը նորից են վարում, արդեն ամբողջ խորությամբ։ Ավելի համախ պատահում է, վոր հողաբերերը աշնանացանի բերքահավաքից հետո, իսկույն սկսում

Են հերկել ամբողջ խորությամբ։ Հերկած հողը, ինչպես այդ միշտ ել արգում է և պետք է, վոր արզի, ձմեռը մնում է չփոցիսված։ Բազմամյա հետազոտությունները ստկայն ցույց են տալիս, վոր նախնական փոցիսվամբ, վորքան ել ուշ կատարված լինի, այնուամենայնիվ մեծ շափով բարձրացնում ե ճակնդեղի բերքը և այդ աճումը հեկտարին 16 ցենտների յև հասնում։

Վոչ պակաս կարեոր ե հերկել (և ուրեմն նաև փոցիսել) հողը, վորքան կարելի յե, շուտ։ Բազմաթիվ փորձերից ստացված տվյալների համաձայն, հերկի ժամանակը այսպես է անդրադարձել ճակնդեղի բերքի վրա (հեկտարից)։

Վաղ հերկի գեղքում ստացվել ե՝ 193 ցենտներ
Միջին » » » » 176 »
Ուշ » » » » 164 »

Վորպեսզի արտերում աշնան և զարնան ջրերը յերկար պահվեն, հողը հարկավոր ե հերկել, վորքան կարելի յե, բայց լայնության։ Հերկի խորությունը պետք է 16-20 սանտիմետրից պակաս չ'լինի։ Նորմալ խորությունը ճակնդեղի համար ճանաչված է 18-27 սանտիմետր։ 27 սանտիմետրից աելի խոր այժմ վոչ մի տեղ արդեն չեն հերկում, վորովհետև ավելի խոր հերկի թանգ ե նստում և չի արդարանում բերքի հավելումով։ Ուկրայնայի (հարավ-արևմտյան շրջանի) նաև Ռուսաստանի կենտրոնական-սևահող շրջանների փորձնական դաշտերում և կայաններում կատարված դիտողությունները ցույց են տալիս, վոր 20-22 սանտիմետրից ավելի հերկի խորացումը դրամե




Նկ. 9.—Հողալորիչ.

չինչ չի ավելացնում բերքին։ Պարաստելով ճակնդեղի համար հողը և խորացնելով հողախավը, պետք է նկատի ունենալ, վոր ներքելի քամ-հար չեղած խավը չի կարելի հողատակից այնքան շուտ տալ, վոր նա բարձրանա մինչեւ հողի մակերեսը։ Այնտեղ, ուր հողախավը 20-27 սանտիմետրից բարակ է, գութանը պետք է խորացվի 16-18 սանտիմետրից վոչ ավել, իսկ գութանի հետեւց դործի զցվի «հողախարիչ» (տես. նկ. 9)։

Հողախարիչը միայն վիրացնում է հողի ներքեկի խալը, սակայն չի բարձրացնում այդ խավը հողի մակերեսը գութանի նման։

Ամենալավն ե հերկել Սակկի մի-խոհանի գութանով, վորը նույն ըշանակի վրա ունի նաև «ճիմահան» (տես. նկ. 10)



Նկ. 10.—Սակկի գութանը նիմահանվ.

Ճիմահանը գութանի անցկացրած ակտուի մեջ թափում և հարսոր և ինսամքով ծածկում այլպիսին հողով։ Հարսոր այդ տեսակ ծածկումը թույլ է տալիս սղատպուծել այն, երբեք պարագանյութ, իսկ վոր գլխավորն է, զաշար մաքրում և մուրախտերից։ Մաքրված զաշտերի վրա գարունքին թեթևանում և յերկրագործական մեքենաների (փոցինի, կուլտիվատորի) և ցանիչների աշխատանքը։

18-22 սանտիմետրի խորությամբ հերկելիս, Սակկի գութանը, վրեն ամբացված ճիմահանով, պահանջում է մի զույգ շատ ուժեղ (կամ յերեք միջակ ուժի) ձի և կամ յերկու զույգ յեղ։ Միջակ զյուղացու անսենությունում այլքան անսուն հաճախ չ'զնիսում։ Ճակնդեղացան անսենությունները մեզանում պատկանում են չքայլոր դրույթիներին և հաճախ բոլորակին զուրկ են լինել հանդիսանութիւններից։ Այս ծանր վիճակից կարող է յելլ հանդիսանութիւնները միացնելու, հողը միահամուռ ուժերով վարելու համար (կոլեկտիվիզացիա)։ Տնտեսությունները միացնելով, շատ ձեռնուու յե հողը հերկել արակորի միջոցով։

Ամենից շատ և տարածված առ այժմ ֆորդունի արակորի (տես նկ. 11 և 12), սակայն տարեցարի յերեան են զալիս նորանոր ավելի կատարելագործված մեքենաներ։


Վորքան ել կարեոր ե զյուղացիական անսենության արակորի-զացիան, այնու ամենայնիվ զյուղացիները հաճախ ի վիճակի չեն լի-

Նում ճեռք բերելու արակտոր: Բացի այլ, այս շարժեցները դեռ կը բավականին թանգ են, ուստի յեվ նրանցով վարելու հաճախ կենդանի ուժի (ճիւների կամ յեղների) միջոցով հերկելուց թանգ և նստում: Չքայլոր տնտեսություններին անհրաժեշտ և այս սլատմառով դիմել,



Նկ. 11.—Տրակտորի հերկը
(հետեւից).


Հսմալծման, այսինքն՝ յերկու կամ ավելի տնտեսությունների միացման, հողը միահամուռ ուժերով մշակելու համար:



Նկ. 12.—Տրակտորի հերկը
(առաջուց).

Իսկ առանձին-առանձին մանր տնտեսությունների միացումը և մի խոշոր կոլեկտիվ տնտեսություն, բոլոր դյուզատնտեսական աշխատանքները միացյալ ուժերով կատարելու նպատակով, հանրակորությունն և տալիս ձեռք բերելու թե՛ պարարտանյութեր և թե՛ լավ վորակի մեքենաներ և այսպիսով մեծապես բարձրացնելու ճակնդեղի բերքը:


Հերկված հողը, ինչպես ասացինք, ձմեռը մնում և չփոցիված: Վաղ գարնանը, յերբ հնարավոր ե գառնում աշխատել գործիքներով և անասունը դաշտում չի խրվում ցեխի մեջ, հարկավոր ե սկսել փոյշիւել: Դա առաջին և ամենակարենը աշխատանքն է յերաշտոտ վայրերում: Անհրաժեշտ և, վորան կարելի յե, վաղ և շուտ փիսրացնել հողի վերին չերտը, վորպեսզի ջուրը հողի մեջ պահպի: Վերին չերտի փիսրացումը շատ և կրծատում գետնի մեջ յեղած ջրի գոլորշիցումը:



Նկ. 13.—Շերտի.

Փոցիւելով միայն փոցիով չի կարելի փիսրացնել ամբողջ վերին չերտը վաղ դարունքին, յերբ չորացած և լինում աշնան հերկված հողի կատորների բարձունքը միայն: Այս սլատմառով նախ քան փոցիւել գործի յեն դցում «շերտ»-եր:

Շերտի մի գործիք և, կազմված ձողերից, վորոնք փոցիւի նման իրար միացած են (Նկ. 13): Զողերը շինուում են ծանր փայտից, ա-




Նկ. 14.—Լինի փոցիք.

ռանց առամի և կամ յերբեմն մեխաշեն առամներով: Գերմանիայում, որինակ, շերտի ձողերը յերբեմն շինում են նաև յերկաթից (շերտային կամ քառակուսի): Շերտի աշխատելիս կամ, այսպես առած «շերտացնելիս», չորացած հողը մերին կատարներից թափվում է ակոսների մեջ և ծածկում ավելի խոնավ հողը, ոլաշտպանելով այլպիսին արևի ճառագայթներից և քամիներից:

Փոցիւելու համար լավագույն գործիք և հանդիսանում չովարդի

կամ լինի յերկաթե կամ պողպատյա փոցիք (Նկ. 14): Այսպիսի համատարած փոցիք հետո կարելի յե իսկույն նրա հետեւից աշխատանքի զցել նաև այն գործիքները, վորոնք մեծ խոռությամբ են փիսրացնում հողը, սակայն չպետք և աշխատել այնպիսի


պիսի գործիքներով, վորոնք տակն ու վրա յեն անում ամբողջ խալերը, մանավանդ չոր յեղանակին։ Ճակնդեղացն անտեսություններում զրա համար սպառում են բացառապես Մասսեց Հարբիսի ձգուար կուլտիվատորներով (նկ. 15) և այլ նման գործիքներով, վորոնցով հողը հեշտությամբ և փխրացվում 9-13 սանտիմետր խորությամբ։



Նկ. 15.—Մասսեց Հարբիսի կուլտիվատորը.

Այսպիսի փխրացումը անհրաժեշտ է մանավանդ այն վայրերում, որ հողը սիսդիմ է, խառն և ալվազի և կալի հետ և ձմեռը հեշտ և սիսդիմ ձյունի տակ։

Խննավ ու ցածր վայրերում և կամ նպաստավոր յեղանակին ձգտեար կուլտիվատորները կարելի յե փխրաբինել Եկկերտի 4-5 խրվանի գութաններով (նկ. 16), վորոնց թեհերը այդ գեպքում լավ և հանել։



Նկ. 16.—Եկկերտի 4-խրվանի գութանը.

Ինչով ել աշխատելու լինենք, —կուլտիվատորներով թե զութաններով, —նրանց հետեւից պետք է գործի զցել փոցիները, վորպեսի հողի


վերին շերտը հարթվի և նրբորեն փխրացվի։ Այս հարթումը կարելի յե կատարել և ավելի թեթեվ, փայտյա փոցիներով կամ թեթեվ յերկաթե «ցանքափոցիներով» (նկար 17), վորովհետեւ հողը հեշտությամբ կրփոցինի նույնիսկ մեկ ընթացքում։ Փխրացված վերին շերտը պաշտպանում և հողը ավելորդ գոլորշիացումից։



Նկ. 17.—Ցանքափոցինը հողերով.

Քանի վոր ճակնդեղի սերմերը իրենց ծերցման համար մեծ քանակով խոնավություն են պահանջում, ուստի և ցանկալի յե, վորպեսի սերմերի խոնավությունը հողի ստորին ըրեսերից մշտապես մոտենա ծիւլը յերեվան գալուց առաջ։ Դրա համար, նախքան թեթեւ փայտյա կամ պաղպատյա փոցինվ հողը հարթելը, զործի յե զցվում փայտյա կամ չուրումի մամեջ դլանը։

Յեթե արտօնմ հողագները շատ են, հարթելու համար գործադրում են ողակաձև պարզ կամ կրինակազմ մետաղյա (հարթ կամ կողազոր) գլան և ապա աշխատում են փոցիներով (անս.՝ նկարներ 18, 19)։ Հողի սիսդացումը նպաստում է ջրի բարձրանալուն դեպի սիսդիմ շերտը, իսկ վերին՝ փխրացված շերտերը արգելում են խոնավությանը բարձրանալ հողի մակերեսը։ Սիսդացման միջում կապճի բավականացնալ չողի մակերեսը։ Այսման վերաբերյա անհրաժեշտ է ճակնդեղի սերմերի ամման համար։




Նկ. 18.—Հարը մետաղյա գլան։

Այս բոլորից պարզ ե, թու վո՞րքան աշխատանք և ժամանակ և պահանջում, վորպեսի հողը լավ պատրաստվի ճակնդեղի ցանքափոցի համար։ Ժամար և վորքան բաղդատեսակ գործիքներ են հարկավոր դրա համար։

Արտասահմանի անտեսություններում վերջին տարիները, արդեն պատերազմից հետո, տեղ-տեղ սկսել են զործածել մեքենաներ, վորոնք փխրաբինում են բոլոր յերկրագործական գործիքները (գութաններ, փխրաբինում են բոլոր յերկրագործական գործիքները)։

փոցիւր, կուլտիվատորներ)։ Դրանից հետո կարող ե պահանջվել միայն հողը հարթելը և թեթևակի փոցիւրը ցետո։ Այդ մեքենաները «Փրեզեր» են կոչվում (տես նկար 20)։ Ֆրեյերները շինվում են զանազան չափերի և գործի յին գցվում մեքանիկական ուժով՝ շողեմեքենայով կամ փոքրիկ տրակտորի միջոցով։




Նկ. 19.—Կողալոր գլան.

Ֆրեզերը կազմված ե մեկ դլանակից, վորի շուրջը տնկված են ճանկեր, կլոր, ծուռ, ինչպես կուլտիվատորի վրա, միայն առաձդակա-



Նկ. 20.—30-ուժանոց դաշտային ֆրեզեր։

նորեն վոլորված (տես նկ. 21)*։ Գլանակը պտտվում է և ճանկերով վիստացնում հողը, այն խորության վրա, վոր ցանկալի յէ։ Ֆրեզերը վոչ միայն վիստացնում է, այլ և վողջ վիստացված շերտը իրար և խառնում։ Յեթե հողի յերեսի վրա լինում ե փառը, հարոս, դոմաղը, Փրեզերը մահը վշըում է այդ բոլորը և լով ել խառնում հողի հետ (նկ. 22)։



Նկ. 21.—Ճանկերով ֆրեզերի բանալ մասերը.

Նկ. 22.—Ֆրեզերը՝ աշխատելիս.

Աւժեղ շարժիչներով ֆրեզերները կարող են մշակել հողախավը մինչև 18-22 սանտիմետր։ Փոքրիկ 2-4 ուժանոց շարժիչներով ֆրեզերները ընդգրկում են մի հողաշերտ 65 սանտիմետրի լայնությամբ և զեկավարելու համար ստենաչին ույժ են պահանջում։


Ֆրեզերները սակայն այնքան ել դեռ չեն տարածված։ Ավելի հաճախ նրանք կիրառվում են բանջարանոցների և այգիների մշակման համար։ Դաշտային տնտեսության պայմաններում լայն չափերով կաղմակերպված փորձեր զբեթե դեռ չենք ունեցել։ Ֆրեզերներ ողտագործելուց զլանավոր վտանգն ե՝ հողի փոշիացումը, վոր առաջացնում և խոնավության ներս ծծման ու հողի մեջ ոդի թափանցման թուլացումը և մի թեթև կեղեւի գոյացումը անձրևվներից հետո։

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ի. ի. Մակարեվիչի լրացումը)

Նախ ե առաջ պետք ե նշել այսակղ աշխանը՝ փոցիւրուց հետո իսկույն՝ ջրելու մեծ ոգուուը, վորովհետեւ այդ պահին (Լենինականի շըրջանում) տեղումները բացակայում են։ առանց հետագա վոռողման փոցիւր ցանկալի հետեվանքներ չեն տալիս՝ սերմերի աճումը, հարոսի մնացորդների փառումը և այլն։

*) Ֆրեզերի և նրա մասերի նկարները վերցվել ենք անտեսագետ կ. Տյունինից, նրա արտասահմանյան ճանապարհորդության նվիրված զեկուցագրից։

Հետո, խոր հերկը պետք է անել անպայման յերկաթե գութանով և վոչ չթով, վորի հերկը բավականաշատ խորը չի, ուստի ճակնդեղի արժանիքը աճելիս դուրս կցըվեն հողի տակից վերև և յեղջուրավոր կառացվեն:



Նկ. 23.—Սովորական շարքացանիչը հացահատիկի համար.

Գարունքին պետք է խուսափել կրկնավար անելուց, վորպեսզի ցանքսից առաջ հողը չըրանա, ուստի գերազատելի յե վաղ «շեշֆացումը» (տես նկար 13): Առանձնապես առաջարկում են թե այդ և թե դաշտի հետաղա մշակումը ցանքսից առաջ կուրտիվատորով (նկ. 15): Յեթե դյուզացին գարնանը կարողացավ խոնավությունը տնտեսել հողի մեջ, այդ դեպքում (Լենինականի վավառում) չարժի դիմել գլանին, իսկ ամենալավը կ'լինի իսկույն ցանիչի հետքերով աշխատանքի դցել ցանքափցիները (նկար 17):

8. ԱԵՐՄԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՑԱՆԵԼՈՒ ՆՈՐՄԱՆ

Շաքարի ճակնդեղը, ինչպես և բանջարանոցում աճած տառերու ճակնդեղը, յերկամյա բույս և, այսինքն՝ նա ծաղկում և տալիս է սերմեր 2-րդ տարում: Սերմեր ստանալու համար, առաջին տարում բուսած արժանիքը ձմեռվա ընթացքում պահպատմ են նկուղներում, «կագառ»-ներում կամ հողում, հաջորդ տարին դուրս են հանվում և ծաղկությունը բողոքոջներ են տալիս և ապա՝ սերմեր: Սերմերի համար ծեցված ճակնդեղը կոչվում է մայրային, իսկ նրա արժանիքը (բուսագիտական տարում)՝ տնկարույսեր (սածիլ): Սերմեր ծեցնելով դրադվում են հատուկ սերմատներու և սելեկցիոն կայանները:

Այն, ինչ վոր ճակնդեղի մեջ սերմ և նքանառում, վոչ այլ ինչ և, յեթե վոչ պատրակներ, վորտեղ սերմերը պարունակված են հատուկ առուր զնդանիվ վորքիկ թաղանթի մեջ: Ամեն մի զնդիկի մեջ լինում է շուրջ սերմ, յերբեմն և մինչեւ 5-6 հատ:

Այս և պատճառը, վոր ճակնդեղի ամեն մի զնդիկ-պատուղը աճելիս տալիք է վոչ թե մեկ, այլ մի քանի բույս: Սելեկցիոն կայանները, վորտեղ զրազված են ամենաբելքատու և շաքարոս տեսակների մշակումով, վաղացի ի վեր ձգնում են ստանալ այնպիսի ճակնդեղ, վոր վորանակ այդ զնդիկ-պատուղների տա առանձին-առանձին սերմեր: Այն ժամանակ ամեն մի սերմից կ'ստացվի մեկ բույս միայն, և դա չափազանց կարելոր և, վորովհետեւ այն հանգամանքը, վոր մի զնդիկից մի քանի բույս և յերեվան դալիս, գժվարացնում և ճակնդեղի ծիւերի նոսրցումը:

Նորածիլ բույսերը առաջին իսկ որերից արժանարուվ խաչաձեկվում են իրար, և յերբ զբանցից մեկը պոկում եք հողից, դա անհանգըստացնում և և հաճախակի վնասում նույն պատուղից աճած մյուս բույսին:

Միջին թվականի 100 կծիկ-պատուղից պիտի ստացվի 150-ից վոչ պակաս ծիլ: Յեթե ծեցնելիս պակաս ծիլ և ստացվում, այդ գեղքում սերմերը անբավարար են համարվում: Լավ, խոչոր կծիկները տալիս են մինչեւ 250-280 ծիլ, անզամ ավելի: յերբեմն, թեև շատ սակավ գեղքերում, 100 կծիկ-պատուղից ստացվում և նույնիսկ մինչեւ 500 ծիլ:

Ցանելուց առաջ միշտ պետք է գիտենալ սերմերի ծլունակությունը: Ծլունակությունից կախված ե ցանելիք սերմերի նորման (քանակը):

Սերմերի ծեցնումը ամենից լավ և կատարել ավագում, պահպանելով նրա մեջ խոնավություն և տեղափորելով ամանը, վորի մեջ կետեղված են ծեցնելք սերմերը, տաք տեղում կամ ուղղակի բնակելի սենյակում: Վերցնում են 100-200 կամ 300 կծիկ, և, ծիլերը յերեվան դահում պես, ծլած կծիկները համբվում են և գեն գցվում: Այսպիսի ծեցնումը և համարումը կատարվում է 2-3 շաբաթ:

Սերմերը կարելի յե ծեցնել թաց փալասներում կամ քեչանարում:

Սերմերի ծլունակությունը վորոշվում և տոկոսներով, այսինքն՝ հաշվում են, վորքան ծիլ և գուրս յեկել ամեն մի 100 կծիկից: Միջին նորման ծլունակությունը հանաչված է՝ 75 տոկոս (75 ծիլ 100 կծի-

կին)։ Սերմերը 40 տոկոսի ծլունակությամբ համարվում են արդեն անպետք ցանքսի համար և կարող են միայն իրենի խառնուրդ ծառայել ծլունակության մեծ տոկոս ունեցող (90-95 տոկոս) սերմերի համար։ Այսպիսի խառնուրդը ստիպում է ավելացնել ցանելիք սերմերի նորուման։ Հաճախ 40 տոկոսից ցածր ծլունակության սերմերը ուղղակի վոչչացնում—այրում են։

Ճակնդեղի սերմերի ծլունակությունը մի քանի տարուց սաստիկ նվազում է, ուստի պետք չե պահել ճակնդեղի սերմերը, նույնիսկ լավ պայմաններում, Յ տարուց ավել։ Յեթե սերմերը պահվում են խոնավ տեղում, արդեն մեկ տարուց հետո նրանց ծլունակությունը կարող է մեծ չափով նվազել, իսկ յերեմն սերմերը կարող են բոլորովին անպետքանալ ցանքսի համար։

Բացի ծլունակությունից ճակնդեղի սերմերի համար արժեքավոր հատկությունն է հանդիսանում կծիկների խոշորությունը։ Յենթադրություն կա, վոր կծիկների չափը ըստ լայնության պետք է լինի Յ միլիմետր, դրանից մասր սերմերը ավելի եժան են գնահատվում, վորովհետեւ նրանք կամ թույլ են ծլում կամ բոլորովին չեն ծլում։

Ճեկտարին պահանջվում է 15-ից մինչեւ 37,5 կգ. սերմ, յերբ սերմի ծլունակությունը նորմալ, միջակ է, այն է՝ 75 տոկոսի դեպքում։ Յանձնիք սերմի քանակը կախված է նաև ցանելու ձեռքից։ Սովորաբար ընդունված է ճակնդեղը ցանել շարքացանիչով, 30—33,5 կիլոդրամ մեկ հեկտարին։ Յերաշտու կլիմայում, որինակ հարավարևելքում, համատարած շարքացանիքի պայմաններում՝ մի հեկտարի վրա պետք է ցանի Յ 33,5 կգ.։ Իսկ «բուն-բուն» ցանքսի պայմաններում՝ սերմի քանակը կարելի յէ կրճատել նույնիսկ մինչեւ 22,5 կլր., բայց վոչ պահան։

«Բուն-բուն» ցանել ասում են այնպիսի շարքացանիքին, յերբ խոփիկից սերմերը գուրս են թափվում կույտ-կույտ, մի քանի հատ միասին, բավկանին հեռու մի կույտ (կամ մի «բուն») մրտւից։ Յանք-սի այս ձեռքի համար գործ են ածում հատուկ «բունացանիչներ» և այսպիսի ցանքսը, յերբ հողի տարածությունը մեծ չե, կատարում են ձեռքով։ Այս ցանքսը մեծ տնտեսություններում քիչ են կիրառվում և կամ բոլորովին չեն կիրառվում։ Վասնդավլոր են այս տեսակ ցանքսը մանավանդ այն դեպքում, յերբ սերմի ծլունակությունը թույլ ե կամ հողը առատ է վնասատուներով և կամ յերբ սպասվում է վնասատուների հարձակումը (մարդաթիթեռ, լու, յերկարակիթ և այլն)։

Ճակնդեղի սերմերը ծլեցնելու համար շատ խոնավություն է պահանջվում, ուստի և չի կարելի ուշացնել նրա ցանքսը։ Միաժամանակ պետք է նկատի ունենալ, վոր ճակնդեղի նոր ծիլերը վախենում են սառնամանիքից։ Վորովհետեւ գարնանային վերջին ցրտերը պատահում են վոչ միշտ և մեծ մասամբ տեղի յեն ունենում ապրիլ ամսի 20-ական թվերում, յերբ կարձատել ցրտերից ամբողջապես չի կարող կորչել ցանքսը, ուստի արժի ցանել ճակնդեղը մի քիչ վաղ։ Վաղ կատարած ցանքսերը տալիս են ավելի լավ բերք, ավելի շաքարու ճակնդեղ և ի վիճակի յեն լինում, մինչեւ վնասատուների յերեվան դալը, ամբուսնդվել այն ասաիճան, վոր վաղ կատարած ցանքսերի վիճակը վնասատուներից այնքան ել զգալի չի լինում։ Յերեմն ճակնդեղի սերմերը ցաներուց առաջ են անում և ծլեցնում մինչեւ սպիտակ բիծը յերեվայ։ Դրա համար պահանջվում է 2-Յ, յերեմն մոտ 5 որ, նայած յեղանակին և ծլեցման տեղին։ Այսպիսի թաց սերմերով կարելի յի ուղարկել նաև մեքենայական ցանքսի համար։ Ծլեցված սերմերով ցանքս անելը վտանգավոր է շատ չոր յեղանակին կամ շատ չորի վրա։

Մի որվա ցանքսի համար անհրաժեշտ սերմացուն կուտակում են մի տեղ, ցնցուղով ջրում, բահով մի յերկու անդամ չուռ տալիս, ապա կույտը ծածկում են բրեզենտով և այսպես ծածկված թողնում մի յերկու որ։ Յեթե յեղանակը տաք է, մոտ Յ որվա մեջ սերմերը «հանում են», սակայն մեծ մասամբ սպիտակ բծիկները յերեվում են 5-6 որից հետո։ Բծերը յերեվալուց հետո կույտի սերմերը փոռում են բարակ շերտով։ Սակայն սերմերը ելի պետք է պահել խոնավ կացության մեջ։ Յերեմն սերմերը թաց են անում ուղղակի պարկերի մեջը ու պարկերը զետեղում ջրի փոքրիկ տակառներում, նույնիսկ գետի, լճի, լճակի մեջ։ Սերմը թաց են անում այն նպատակով, վորպեսզի ջուրը թափանցի նրա մեջ բավականաչափ և սերմը շրջապատող կեղեվը փափկանա։ Բայց և այնպես, այդ միջոցը չի կարելի առաջարկել։

Թաց արված սերմը նույնիսկ լավ յեղանակին աշխատում են չցանել, իսկ ցանքսը ուշանալու դեպքում, յերբ հողը չորացել և չ չառ տաք յեղանակ է անում, ծլեցված սերմը ցանելը նույնիսկ ուղղակի վախանդավոր է։ Ավելի լավ է մի քիչ վաղ ցանել ճակնդեղը և չը հետափանդավոր է։ Ավելի լավ է պահանակով այդ աշխատանքը։ Համաձայն 1924 թ. կատարած դիտողությունների, յերբ տեղի ուներ յերաշտը, ցանքսի ժամանակակի հետեւյալ կերպով և անդրադարձել սախկին Տամբովի նահանգի նովոպոլսկակի շաքարագործարանի բերքերի վրա՝

Ապրիլի 23-ին	կատարած	ցանքալ	ամփել	և հեկտարից՝	159 ցեստն.
Մայիսի 12-ին	»	»	»	»	126 »
» 26 ին	»	»	»	»	99 »

Հարավ-արևիվման նահանգներում (աջափյառ Ռէկրայնա) և ձախ-ափյառ շրջաններում (Խարկով, Պոլտավա, Զերնիգով), ձակնդեղի ցանքսին ձեռնարկում են նույն ժամանակին, ինչ և վաղ գարնանացան ցանքսերին (ցորեն, վարսակ), իսկ յերբեմն նույնիսկ զրանից ել վաղ:

Նույնչափ անհրաժեշտ ե վաղ ցանել նաև կենտրոնական-սևահանդ նահանգներում, չնայած այդ վայրերի ավելի գամժան կլիմային և սառ-նամանիքից վոչնչանալու հնարավորությանը: Կարծում ենք, վոր պետք ե ցանել այն ժամանակ, յերբ հողը տաքանում ե. մինչև 12 տասին: Սառնամանիքից ամբողջապես կորչելու գեղքեր յերեք չեն յեղել. յե-թե վնասվում ել են ցանքսերը, այդ պատահում ե միայն մասնակի: Ուստի ձեռնարկելով ցանքսի, վաղորոք նախատեսնում են մասնակի կրկնացանքի անհրաժեշտությունը, սակայն զրա փոխարեն այն վաղ կատարած ցանքսերը, վորոնք գիմանում են սառնամանիքին, ավելի լավ կամրասնդվեն մինչև գարնանային յերաշաները հանելը և ավելի հեշտությամբ կը գիմանան թե յերաշախն և թե վնասառուներին: Վաղ արած ցանքը ավելի շուտ և հաստանանում և ավելի շաքարոտ ձակնդեղ և տալիս: Ճակնդեղի ցանքսերը ի հարկին պետք և վերանորոգել մինչև մայիսի սկիզբը և վոչ ուշ քան մայիսի կեսը: Մանավանդ վտանգավոր են ուշ կատարած կրկնացանքսերը հարավ-արևիվլյան, յերաշտոտ կլի-մայում, ուր գարունը հաճախ չոր և լինում:

Ճակնդեղի տեսակները բաղմաթիվ են: Երանցից մի քանիսը շատ մեծ բերք են տալիս, արմատները սակայն շաքարոտության փոքր տո-կոս են պարսւնակում: Մի քանիսը, լնդհակառակը, փոքր բերք տո-լով հանդերձ, բարձր շաքարոտության արմատներ ունեն: Բնդհանքա-պես ամենահարմար պիտի համարել այն տեսակները, վորոնք տվյալ հողի վրա շաքարի ամենաբարձր քանակը կը տան:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (Ի. Ի. Մակարենիչի լրացումը)

Հայաստանի նորիսալեռնային մասի բնորոշ գիծը կայանում ե նրա ուշ ցրտերի մեջ, վորոնք ճակնդեղի շրջաններում յերեմն տեղի յեն ունենում մինչև հունիսի 12-ը: Ուստի միաք չունի սպասել մինչև ցըր-տերն անցնելը, այլ լնդհակառակը պետք և ճակնդեղը ցանել, վորքան կարելի յե, վաղ, գարու ցանքսերից անմիջապես հետո, վորպեսի ճակ-

դեղը՝ մինչեւ վերահաս ցրտերը վոչ միայն ծլի, այլ և ամբազնդիլ: Այսպէս, որինակ, 1929 թվին Ղարաբիլիսայի շրջանում բավականին ուժեղ ցրտեր տեղի ունեցան՝ հունիսի 17-ին, վորոնցից վնասվեցին բանջարանոցի մշակույթները՝ լորին, կարտոֆիլը, իսկ ճակնդեղը մնաց բոլորովին անխնաս, վորովհետեւ արգեն բավականին աճել եր:

Գարնան հենց առաջին որերից սկսվող ողի տաքությունը, յերբ միաժամանակ հողը տեղումներով բավականաչափ առաջ և նամերաշխ միոր պայմաններ և սեղծում սերմերի արագ և համերաշխ աճելու համար, ուստի և ճակնդեղի հատուկ ցանիչներով ոգավելիս նորմալ ծլու-նակություն ունեցող սերմերի նորման ցանքի համար կարելի յե պա-կասեցնել 32 կիլոգրամից մինչև 27-28-ը աճեն մի հեկտարին:


Մերգանում խորհրդացին անտեսության մեջ, լնդունված ճակնդե-ղի յերեք տեսակներից՝ «բերքատու» (կրծառված «Է»), «շաքարոտ» («Զ»), և «բերքատու-շաքարոտ» («Ն») մարկաներից գեղազանելի յե-ռութիւն տառաջին (բերքատու) մարկայով, վոլն ապահովում ե արմատ-ների ամենամեծ բերքը և միաժամանակ շաքարի ամենամեծ պաշարը, վորովհետեւ արտօն զանազան մարկաների մեջ շաքարի բովանդակու-թյունների տարբերությունը այնքան նշանակոր չե, վորքան նշանա-վոր և նրանց արմատների բերքերի մեջ յեղած տարբերությունը: Իբրև որինակ, այսուհետ կարելի յե մատնանշել 1929 թվի տեսակափորձության վրա, յերբ ծայրահեղ տեսակների տվյալ բերքերի տարբերությունը վրա, յերբ ծայրահեղ տեսակների տվյալ բերքերի տարբերությունը վրա և կամ 36 տոկոս ցածը տե-կազմում եր 41.22 ցենտն. Հեկտարի վրա և կամ 36 տոկոս ցածը տե-սակի վերաբերմամբ, իսկ շաքարի բովանդակությունը նույն մարկա-ների մեջ տատանում եր 20-20.8 տոկոսի առաջաններում:

9. ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵԼԸ ՑԱՆԵԼՈՒ ԶԵՎԵՐԸ

Շաքարի ճակնդեղը անպատճառ պիտի ցանիի շաքարով: Փոքր ցանքսերը կարելի յե կատարել ճեռքով կամ միշտքանի և կամ յերկ-շաքարնի ձեռնացանիչներով: Սակայն այդ կարելի յե անել բանջարա-նոցում, մի քանի տասնյակ քառակաւու մետրի տարբերության վրա: Ավելի մեծ տարածությունների վրա անհրաժեշտ և ոգավել ձիաշարյ շաքարանիչներով:


Ճակնդեղի ցանքսի համար կարելի յե ոգավել աճեն տեսակ ցանիշ-ներով, միայն թե շաքարերի միջի հեռավորությունը 27-36 աճատիմետ-րից պակաս չ'լինի: Ուրեմն, սովորական ցորենի ցանիչներում (նկ. 23), վորտեղի խոփերի մեջ հեռավորությունը լինում է 9-ից մինչև 18 մե-ր, վորտեղի խոփերի մեջ հեռավորությունը լինում է 9-ից մինչև 18 մե-

խոփերի մի մասը պիտի փակվի : Այդ հետ և անել, վորովհետեւ ալելորդ խոփերը հեշտությամբ են հանվում շրջանակից : Ցանող արկղի ծակերը կարող են ծածկվել հատուկ ծածկոցներով : Կամ մշտապես ցանիչներին ամրացված փակիչներով :



Նկ. 24.—Ներքեվից և վերեվից սերմանող արկղի կտրվածքը.


Յեթե ձակնդեղը ցանելիս սպավում ենք հացահատիկի ցանիչներով, պետք է վերցնենք այնպիսիները, վորոնք հացահատիկը դուրս են թափում վոչ թե ներքեվից, ինչպես այդ լինում ե առհասարակ, այլ վերեվից (նկ. 24) :



Նկ. 25.—Ճակնդեղի սովորական ցանիչը.


Սյազիսի ցանիչներ ել են պատրաստվում : Ներքեվից սերմանող ցանիչներում ձակնդեղի խոչոր սերմակծիկները կ'փշրվեն, կ'փոշուվեն, այդ յերբեք չի պատահի վերեվից սերմանող ցանիչներում :

Սակայն հաճախ չափարի ձակնդեղը ցանելիս գործ են ածվում ձակնդեղի ցանքսի համար հատուկ ցանիչներ, վորոնց խոփերը իրարից վորոշ հեռավորության վրա յեն սարքված :



Նկ. 26.—Եվրոպական սակնդեղացանիչը.


Ավելի ևս հաճախ կիրառվում են բարդ ցանիչներ, այսինքն՝ այնպիսիներ, վորոնք ձակնդեղի սերմը ցանելով հանդերձ, միաժամանակ կարող են և պարարտացնել հողը արհեստական պարարտանյութերով : Այդ բարդ ցանիչներից ամենաբարեն են համարյում նախկին Ելվոր-Յու բարդ ցանիչներից ամենաբարեն են համարյում նախկին Ելվոր-



Նկ. 27.—Վեսկի սովորական ցյուղացիական նակնդեղացանիչը քեվերով.

տիլի, Ֆիլվերովի և Դեղինայի գործարանների շինած ցանիչները (Նըկարներ 25, 26, 27) : Գործ են ածվում հաճախ Ելվորակի, Մելիխարի և Մենցելի ցանիչները : Ճակնդեղի ցանիչները շինվում են խոփերի մի-


ջեվ պետք յեղած հեռավորություններով, այն ե՝ 35,40 և 44,5 սանտի-
մետը : Խոչըր տնտեսություններում սովորաբար գործ են ածվում 40 և
44,5 սանտիմետը հեռավորություն ունեցող ցանիչներ : Հատուկ ճա-



Նկ. 28.—Ճակնդեղացանիչիք բեկավոր
բուր խռովիկը.

կրնղեղացանիչների խոփերը կողքերից ումեն առանձին թեղեր՝ սերմերը սլաշտպանելու համար (Նկ. 28):


թեև բոլոր ցանիչներին կցվում են նաև ցուցմունքներ և հարմարեցումներ, ցանելիք սերմերի և պարարտանյութերի քանակը նախորոշահմանելու համար, սակայն նախքան աշխատանքի դցելը, ամեն մի



Ակ. 29.—Յերկարկանի բարդ ցանիչի կտրվածքը (պարարտանյութեք և սերմեր միաժամանակ ցանելու համար)։

ցանիչը պետք է հենց բակում նախասահմանել և այստեղ ստուգել, և ազա անպատճառ ստուգել նաև դաշտում: Բարդ ճականականիչներում կարելի յե պակասեցնել և սովելացնել վոչ միայն ցանելիք սերմերի, այլ և պարարտանյութերի քանակը: Պարարտանյութերը արկայց

դուրս են թափում հատուկ թիրուկի միջոցով, վորի վրա տնկված են ծուռ կամ գլանակին մեխիած ուղիղ ամբակապերը: Թիրուկը անշարժ է, իսկ պարարտանյութերը սպառվելուն պես մեքենայաբար արկղից լցվում են նրա մեջ. արկղի հատակը և հետին պատը աստիճանաբար բարձրանում են ատամնավոր անխվների միջոցով: Դուրս նետող գլանակի ատամները դասավորված են թեք, պտուտակաշերի շարքերի ձևով: Պարարտանյութը դուրս է նետվում առատորեն կամ պակաս քանակներով, նայած, թե նախապես ինչպես եք սահմանել ցանիչը, և նետվում է զրեթե անընդհատ (նկ. 29), ուույն խոփիկների մեջ, ուր թափում է և սերմը: Հողի մեջ պարարտանյութը տեղափորվում է սերմերից մի քիչ ներքեւ:




31. 20.—Արևի համար նաև նականեղացանիչը հարթիչ անիվներով.

ՅԱՆԻՀՆԵՐԸ կարելի յե հարմարեցնել այսպես, վոր պարարտա-
նյութերը թափվեն ուղած չափով, թեև մինչև վորու սահմանը:
ՅԱՆԻՀՆԵՐԻ գոյություն ունեցող սխտությները կարող են ցանել ոսուակեր-
ֆոսֆատ, վոչ ապել, քան հեկտարին 3 մ. ցենտոներ:

Ճակնդեղացանիչների սերմի տրկղներում սովորաբար լինում էն
սերմախառնիչները, ուստի կարելի յե ցանքս անել և թրջված սերմե-
րով, թեև չոր սերմերը ցանդում են ավելի հագասարաշափի, քան թրջ-
ված սերմերը: Հացահատիկի հասարակ ցանիչներում, վորտեղ խառ-
նիչներ չեն շինդում, թրջված սերմերը ծակի վրա կուտակվում են կա-
մարածեն, սերմերը դադարում են թափել և անուշաղբության դեպ-
քում: Հողի վրոշ մասերը կարող են մնալ չցանված: Յերեսն ցանի-
չի հետեւից անց են կացնում փայտյա գլան, վորպեսզի հողի վերին
շերտը պամփի, խոնավությունը բարձրանա վերև և ծիւերի յերևալը

արտղանա : Գլանի հետեւց պետք է անց կացնել թեթև ցանքափոցիը՝ հողը գոլորշեցումից պաշտպանելու համար :

Այդ տեսակ փոցիումը կարող է խախտել շարքերի կանոնավորությունը, իսկ ամբողջ արտի հարթումը ուժեղացնում է հողի մեջ խոնավության գոլորշեցումը, ուստի ավելի հարմար է զործ ածել զլանիկավոր ցանիչներ, վորոնք հետեւում են ցանիչի ամեն մի խոփին : Կան և այլպիսի ցանիչներ (նկ. 30), բայց դժբախտաբար նրանք զեռ կատարելազործված չեն : Այդ ցանիչները կամ շատ են ծանր և կամ հարմարեցված չեն ձակնդեղը ցանելուն, մանավանդ մանր տնտեսություններում :



Նկ. 31.—Ճակնդեղի դաշտը լայնաշարք ցանելորով.

Յանելիս շատ կարեվոր է սահմանել շարքամիջերի լայնությունը՝ Սրվորաբար ժամանակակից ցանիչներում խոփիկների միջի տարածությունը լինում է 36-ից մինչև 44,5 սանտիմետր :

Փորձերը ցույց են տալիս, վոր, յերբ այդ տարածությունը ավելացնում ենք 36-ից մինչև 44,5 սանտիմետր, դրանից վուշ միայն չել պակասում, այլ և ավելանում է ճակնդեղի բերքատվությունը : 44,5 սանտիմետրանոց շարքամիջերի մշակումը նույնիսկ ավելի եժան և նստում է կարող ել կատարվել վոչ ձեռքով, այլ մեքենայական միջոցով (որին ճակնդու արորներով) :

Փորձերը, վոր վերջին տարիներս (պլոֆ. Յակուշինի ձեռքով) կատարվել են Վոլոնիժի և Տամբովի նահանդների գործարաններում, ավել են հետեւյալ արդյունքներ՝


36 սմ՝ բերքը յեղել է հեկտարից 140 ցենտներ

44 սմ՝ » » » 147 ցենտներ

Նովո-Պոլյառվուկի գործարան


Բամոնյի փորձնակայանի բաղմամյա տվյալները ապացուցում են

44,5 սանտիմետրանոց շարքամիջի առավելությունը : Սակայն գյուղացիական տնտեսություններում, ուր մշակումը ձեռքով ե կատարվում, լով և 36 սանտիմետրանոց շարքամիջերավ ցանել:



Նկ. 32.—Պլանետի ձեռքի կուլտիվատոր.

Վերջին տարիների ընթացքում փորձել են նաև ճակնդեղի լայնաշարք ցանքեր, վորտեղ ճակնդեղի շարքերը դաստիրվում են զույգ-զույգ 18-17 մ. հեռավորության վրա, իսկ շարքամիջը լինում է 44,5-ից մինչև 54 սմ. :



Նկ. 33.—Շարքամիջերի մշակումը պլանետով.

Փորձը ցույց է տալիս, վոր յերբ կիարառվում են յերկուսղանի լայնաշարք ցանքերը 44,5 սանտիմետրանոց շարքամիջավ և 18 սանտիմետրի չափով մոտեցված զույգ-զույգ շարքերով, այդ գեպօտմ ավելանում է շաքարի ճակնդեղի բերքը յեկ շաքարի բովանդակում և շաքարի ճակնդեղի բերքը յեկ շաքարի բովանդակում թյունը բարձրանում է արմատներում : Ամեն մի հեկտարի բերքը աճում է 16,4-20 ցենտներով, իսկ շաքարի բովանդակությունը՝ 0,5-ից մինչև 1%-ը (նկ. 31) :

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ի. ի. Մակարեվիչի լրացումը)

«Սախարոսթեստ»-ից մեզ մոտ ստացված ձակնղեղի բարդ ցանիչ-ները խոփիկների մեջ ունեն 44,5 ամ . Հեռավորություն : Հենց այդպիս ել պիտի լինի . Լենինականի փոքրերը ցույց տվին , վոր ամենահար-մար տարածությունը խոփիկների մեջ համապատասխանում է 53,5 սանտիմետրի . այս տեսակ խոփիկներով ստացվել ե շաքարի ամենա-մեծ հավաքը հետաքրիզ :

1929 ԹՎԻ ՓՈՐՁԵՐԻՑ

<i>Խոփիկների</i>	<i>Արմաաների</i>	<i>Շաքարի բովանդակութիւն</i>
<i>Հեռավորություններ</i>	<i>ընկորաց (ցենտ.)</i>	<i>Տոկուներով</i>
44 ½ <i>սմ.</i>	110,3	19,8 %
58 ½ <i>»</i>	117,1	19,6 %
62 ¼ <i>»</i>	110,7	19,7 %
		21,84 <i>գեն.</i>
		22,95 <i>»</i>
		21,81 <i>»</i>

Հողամասերը, վորոնց վրա Հայաստանում ցանում են ձակնդեղը՝ հաճախակի անկանոն ձեի լին, ծուռ ու մուռ կողմերով։ Այն ինչ, այդ հանդամնքը նպասատավոր չե ձակնդեղի ցանքսին, վոր սիտի կատարել ուղիղ գծով, ըստ դաշտի յերկարության, առաջ և հետ։ Յեկմիայն այն ժամանակ, յերբ դաշտի գլխավոր մասը ցանված է, ցանում են նրա չցանված ծայրերը, նրա անկանոն կողմերին դուզընթաց ցանիչը անցկացնելով դաշտի մոտով։

10. ՃԱԿՆԴԵՂԻ ԽՆԱՄՔԸ ՆՐԱ ԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

(Փիրացում, սեհրակացում, ստուգում, վոռողում)

Փխրագում.

Նայած յեղանակին, շաբարի ճակնդեղի ծիլերը յերե-
պում են 8-12 որվա ընթացքում, միջին թվով 9-րդ կամ 10-րդ որը:
Ճակնդեղի ծիլերը յերևալուն պես, յերբ ցանված հողի վրա գուրս են
պրծնում մատաղ բռւյսերի շաբարը, անհրաժեշտ է իսկույն, ցանքսի
որից մոտավորապես 1,5-2 շաբաթվա ընթացքում, սկսել փխրացնել
շաբարմիջերը:

Ճակնդեղը աճեցնելու հետ կապված բոլոր աշխատանքները չափազանց ուժեղ են անդրադառնում ճակնդեղի բներքատվության, նույնիսկ չափարուութվան վրա: Ուստի այս աշխատանքները չի կարելի ուշացնել, չի կարելի բաց թողնել նույն իսկ մի որ և ամեն ինչ պետք է կատարել խնամքով, կանոնավոր կերպով և ուշի-ուշով:

Յերբեմն այդ աշխատանքներին ձեռնամուխ են լինում նույն իսկ այն ժամանակ, յերբ ճակնդեղի ծիլերը բոլոր շարքերում զեռ նկատելի չեն կամ շարքերում յերևացել են վոչ բոլոր բոլոյները։ Հետաձեռ այդ աշխատանքը չ' արժի։ Փիրացումով մենք վոչնչացնում ենք շարքամիջերի մեջ յեղած մոլախոտերը։



Ակ. 34.—Ծաբքամիջերի
մշակումը փրեզերով.

Անհրաժեշտ է այդ խոտերը պուկել ձեռքով շարքերի սև և ծաղկաց այդ աշխատանքի գլխավոր նպատակն է փափկացնել, փիրացնել հողի վերին շերտը շարքամիջներում, կը մատել խոնավության գոլորչացուր վերին շերտը շարքամիջներում, կը մատել խոնավության գոլորչացուր մը հողից, վորը ցանքսի ժամանակ պնդացել է հարթվելուց հետո յեզ կամ սղմվել տեղացած անձրեներից, և առհասարակ լավագույն պայտ մաններ ստեղծել մատադ բույսերի համար:

Այս աշխատանքը կատարվում է ձեռքի փոցին՝ և անտի-
«սապկա») այնպես, վոր հողը փիլանա վոչ պակաս քան 4,5 սանտի-
մետը խորության վրա։ Այդ աշխատանքը կարելի յե կատարել նաև
Պլանետի ձեռքի կուլտիվատորներով, վորոնք մեծ մասմբ կիրառվում
են բանջարանցներում։ Այս գեղքում Պլանետին ամբացնում են հա-
տուկ գանակներ (յեթե կան մոլախոտեր) և կամ փոցիներ (յերբ
դաշտը մաքուր է) (նկ. 32)։

Փիրացումը արագացնում և լողոր ծիլերի յարակը յակ աղ ծիլերի ամբակնդվելուն և արագ աճելուն (նկ.33)։ ծիլած մատաղ բույսերի ամբակնդվելուն

Փիրացման համար շատ հարմար են, յօթու չարքարէրէւ և յարքարէրէւ ինքնազնաց Քրեղերները, վորոնք կիրառվում են բանջափոքառութ ինքնազնաց Քրեղերները, վորոնք կիրառվում են բանջառանոցներում և այդինքներում : 34-րդ նկարի վրա պակերացված ե շարուանոցներում և այդինքներում : 34-րդ նկարի վրա պակերացված ե շարուանոցներում և այդինքներում :

ՍԵՐՀԱԿԱՑՈՒՄ (Ցանկառագում)

Յերկու շաբաթից հետո, մոռավորապես մայիսի կեսին, յերբ յերեան են գալիս ճակնդեղի 2-3 խսկական տերեսներ, սկսում են նորից փխրացնել և նորացնել ճակնդեղը։ Շարքերի բոլոր թույլ և ալելորդ բույսերը պոկում են։

Ճակատեղի բույսերը լնդունված և թողնել իրարից 20-22 սահմանում։ Հեռափորության վրա։

Գերմանական տնտեսություններում բույսերը դասավորված են ալելի խիտ, 13-18 սանտիմետր իրարից։ Յերաշոտ վայրերում, որինակ՝ հարավ-արևելքում, գերադասելի յև թողնել ավելի ցանցաւ, վորովհետեւ ճակնդեղի տերեւի մակերեսը, մնացյալ լայնատերեւ բույսերի նման, ուժեղացնում և ջրի գոլորշիացումը հողից։ Հարավ-արևելքի հողերի վրա, ուր առաջաւմները անբավարար են լինում, չոգերը՝ սաստիկ և քամիները՝ միշտ չոր, լավ և բույսերի միջի տարածությունը թողնել 22 սանտիմետրից վուշ ավել։ Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, բույսերի միջի հեռավորության ավելացումը, թեև չի պակասեցնում նրանց բերքը, սակայն ցածացնում է նրանց արմատների շաքարտությունը։ Փորձերը, վոր կատարվել են նախկին Խարկովի նահանգի իվանովսկի փորձնակայանում տարրեր հեռավորությունների վերաբերյալ, ավել են հետեւյալ արդյունքները։

<i>Բաւյսերի մեջի հեռավոր.</i>	<i>18 սմ.</i>	<i>22 սմ.</i>	<i>27 սմ.</i>	<i>31 սմ.</i>	<i>36 սմ.</i>
<i>Բնություն՝ հետարբեց ցինու.</i>	<i>168</i>	<i>201</i>	<i>205</i>	<i>213</i>	<i>218</i>

1924 թ. Նովոստիկը ու վակի շաքարագործաւանի փորձնական դաշտերում միջին թվով ստացվել ե՝

22 սմ. հեռավորության դեպքում . . . 118 ցենտներ

27 *b* *b* *b* **143** *b*

31 » » » **134** »

Սերհակացման (ցանցառացման) աշխատանքը կատարում էն չտփաներով, սկզբից և յեթ բույսերի մեջ թողնելով տղած վողջ հեռավորությունը և կամ առաջին անգամ զետեղելով նրանք ավելի մոտիկ, 11-12 մ. իրարից հետո։ Բացի այդ, բույսերը թողնում են կամ մեն-

ժենակ, կամ բուն-բուն, փունջերով, ամեն բունի մէջ մի-մի քանի
հատ: Անում են այդ նրա համար, վորպեսզի հետո, յերբ բույսերը մի
քիչ ավելի ամրապնդվեն, դրանցից մնան ամենաուժեղ որինակները:
Անում են այդ նաև այն նպատակով, վորպեսզի պաշտպանված լինեն
ցանքսերը արողջական վոչնչացումից յերկարակթի գեմ, վորը հենց
այդ ժամանակ յերեան և գալիս դաշտերում: Բույսերը խիտ լինելու
դեպքում, այդ վնասատուն իր սննդի համար բավականանում և դաշտի
մի վորոշ մասով միայն և փունջերի մէջ բույսերի մի մասը մնում և
անվնաս: Այսպիսով, կարելի յե փրկել դաշտերը և չկատարել այլ եռ
մէծ տարածության վրա կրկնացանքսեր, վորոնք այդ ուշ ժամանակին
արդեն անհույսալի լին:

Յանցուացումը, վորի ժամանակ ճակնդեղը թողնում
են փունջերով, հաճախակի կատարվում է վոչ ձեռքով, այլ մեքե-
նաներով, վորոնց զույգ-զույգ ամբացված դանակները (ինչպես, որի-
նակ, Պլանետի մոտ), կարատում են ցանած ճակնդեղի շարքերը, կըտ-
րատված հողաչերտերի մեջ թփեր թողնելով։ Այսպիսի մեքենաներ անց-
են կացնում, ի հարկի, ցանած ճակնդեղի շարքերի լայնությամբ։
Փնջերի (թփերի) մեջ սերհակացումը կատարվում է արդեն ձեռքով։

Սերհակացման հետ միխամանակ կրկին անզամ չափայով թուր
բում են շարքամիջերը, յեթե այդ պահին յերեան են գալիս մոլախո-
տեր և կամ հողը ողմվում է տեղացած անձրեներից; թոխրումը կա-
տարվում է նույն դործիքներով, ինչպես և վիշրացումը ասկայն ձեռքով
մշակելի ավելի ոպտակար է: Փխրացումը և սերհակացումը միխամա-
մակելի ավելի ոպտակար է: Փխրացումը և սերհակացումը մեքենաներ, վորոնց
նակ կատարելու նպատակով հնարել են հատուկ մեքենաներ, վորոնց
մեջ կարելի յե փոփոխել մշակվող շարքամիջերի յեվ փնտերի հեռա-
վորությունների (սեհրակացման ժամանակ) լայնությունը: Լայն տա-
րածում նրանք գեռ չեն ստացել, այդպիսի մեքենաների դործարանային
մասսայական արտադրություն գեռ գոյություն չունի: Մեքենաները
փորձվել են որինակելի տնտեսություններում և լավ արդյունք են
ապել: Հեռու չե այն ժամանակը, յերբ նրանք լայն տարածում կտա-
նան ճակնդեղի տնտեսություններում:

ՍԵՐԱԿԱԳՈՎԱՄԻց ՀԿՈՊ ԱՊԱՀԱՐԿՈՎՄ ԷՆ ԲՈՐԱԿՈՎ ԱՎԿԵՐԵՍՈՒՅԾ
պարարտացնել: ՍԵՐԱԿԱԳՆԵԼԻՄ, յերբ մնացած բույսերը մի քիչ
վրդովկած են մինում, տևող և տառապում են, անհրաժեշտ է ստեղծել
վորոշակած նրանց ավելի արագ ամրապնդվելու և զարգանալու
համար. այդ պահին բորակով պարարտացնելը կարող է շատ ոգու-

Կար լինել: Արտերի վրա ցիր ու ցան թափված բորակը արագորեն լուծվում է և թափանցում մինչև արմատները:

Իր ժամանակին սերՀակացնելը ավելի կարեոր է, քան փիլրացնելը, և ավելի ևս մեծ ներդործություն և անում ձակնդեղի թե՛ բերքի և թե՛ լավորակության (շաբարտության) վրա: ՍերՀակացման աշխատանքների ուշացումը ավելի յէ պակասեցնում բերքը, քան փիլրացնելու ուշացումը:

Սերհակացման ժամկետները, Խարկովի մարզում գտնվող Իվանվսկի փորձնակայանի փորձերի համաձայն, այսպէս են անդրադարձել ճակնդեղի բերքի վրա (արգում ե՝ ցենսներ հեկտարից):

Աերհակացման ժամ-կետները	Հեռավորություն 18 սմ.	Հեռավորություն 22 սմ.	Հեռավորություն 7 սմ.
Մայիսի 12-ը	230	236	232
» 19-ը	219	221	191
» 26-ը	199	199	185

ԱՏՈՒԳՈՒՄ

Սերհակացումից մի յերկու շաբաթ անց, ուրեմն, մայիսի վերջերին կամ հունիսի սկզբներին, կատարվում է վերջին և կարևոր պչխատանքը՝ ստուգումը, այսինքն՝ վերանայում են բույսերի շարքերը, վոչնչացնում են փնջերը, մենակյաց բույսերի մեջ թողնում են այն հռովորությունը, զոր անհրաժեշտ է ճանաւմած:

Ստուգման հետ միաժամանակ, կրկին անգամ փխրացվում է Հողի վերին շերտը և վոչնչացվում են մոլախոտերը, թե վոր նրանք յերեան են յեկել դաշտում։ Այդ ժամանակ բույսերը ունենում են 4-ից մինչև 6 խսկական տերև։

Սերհակացումից և ստուգումից հետո բույսերը ավելի արագ են սկսում աճել, շուտով կազմում են խիտ-խիտ շարքեր և շարքերի մեջ յեղած արանքները, «շարքամիջերը» վակիվում են:

Անխնամ թողած տնտեսություններում, ուր վատ և անժամանակ և մշակվում հողը և մոլախոտերի գեմ կովելու վոչ մի միջոցի չեն գիտում, հաճախ ստուգումից հետո յել բույսերի մեջ յերևան են դալիս մոլախոտեր, վորոնցից որպանք սկսում են ընկձվել: Պետք է, անշուշտ, միջոցներ ձեռք առնել վոչնչացնելու մոլախոտերը. սակայն զործադրել այդ ժամանակ վորեւ զործիք, թեկուզ ձեռքի զործիք, դժվար է և անհարմար: Միայն ձեռքով կարելի յե պակել մոլախոտերը:

Բոլոր մշակվող բույսերից շաքարի ձափնդեղը ամենազգայունն է հանդիսանում մոլախոտերի դիմաց : Ճակնդեղի դաշտերում ամեն մի մոլախոտ սասարիկ պահանջնում ե բերքը և նրա արմատների շաքարությունը, իսկ յերբեմն ամբողջովին վոչնչացնում ե ցանքը :

Շաքարի ճակնդեղը լուսասեր բույս է: Միայն լիստատ և յերկարատե արեկի լույսի տակ է, վոր ճակնդեղի արմատների մեջ գոյանում է շաքարի ամենամհեծ քանակը: Վորքան շատ լինեն արեալին որեր ճակնդեղի աճելու ժամանակ, այնքան շատ շաքար կարող է լինել նրա մեջ: Սամարայի և Սարատովի լընդզվոլցյան նահանգներում և նրանց կեց շրջաններում, վորտեղ քիչ են պատահում թղթուտ և անձրեալին որեր, ճակնդեղը ավելի շաքարոտ է լինում:

Շաքարը գոյանում է տերևներում ողի ածխաթթվուտից և ջրից
արեի ճռուաղայթների ազդեցության տակ; Տերևներն են հենց այն
գործարանը, վորտեղ մշակվում է շաքարը, վորը ապա անցնում է ար-
մատներին: Ահա թե ինչու մոլախոտերը, ստվերածածկելով ձակնղե-
ղը, պակասեցնում են շաքարի գոյացումը և նույն իսկ բոլորովին կա-
րող են խեղդել ձակնղեղը:

Յերբ շարքամիջերը ծածկվում են աճած տերելիներով, բոլոր դաշտային աշխատանքները կանոնավոր և լավ խնամքող տնտեսություններում դադարում են մի առ ժամանակ մինչև բերքի հափաքը:

Իսկ շաղկապելով հետագայում ճակնդեղացան գյուղացիական արնուելությունները, վորոնք ամբողջովին միավորվելու յեն կոչտնտեսության ձեփով (շաքարի գործարանից 15 կիլոմետրի շառավղով), շաքարի գործարանի արտադրական շահերի հետ, կըսեղծենք մի հաստատուն հումուրյային բաղա նորածին կարելոր արդյունաբերության համար։

Այդ շաղկապի պայմաններում հեշտությամբ կարելի կլինի իրագործել բոլոր թե՛ սյուզատնտեսական և թե՛ տեխնիքական ձեռնարկումները ամբողջ շրջանում, վորը միացված կըլինի խորհրդացին շաքարի տնտեսության («Սահսուվխոզ»-ի) զեկավարության ներքո։ Այս զեպքում իրազործելի յե դատնում գյուղատնտեսական ինվենտարի և «Սահսուվխոզ»-ի սարքավորման սացիոնալ ոկտազործումը, վորը կրկրանակի կոլխոզների հիմնական ներդրումները։

Բացի այդ, վերոհիշյալ շաղկապը անհրաժեշտ է նաև անասնաբուծության գծով, բայ վորում պիտի սպագործվի նույն կոլլեկտիվ ուղղությամբ թե սովխոզի դարմանը և ճակնդեղի «դիչ»-ը (աերելիները) և թե՛ շաքարի գործարանի քուսպը կոլխոզի անասունների կերի համար, և միաժամանակ գյուղացիական անասնաբուծության կաթնամթերքները կիրացվեն սովխոզի ֆերմերի միջոցով։

Ստեղծել միացված և խոշորացված արտադրություն՝ սովխոզ-կոլխոզ-կոմբինատ՝ ահա հերթական և ակտուալ անկիքը մեր ճակնդեղացան շրջանում։

16. ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ՇԱՀԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Շաքարի ճակնդեղի շահավետությունը կախված է գլխավորապես գերքից և տնտեսության ու գործարանի մեջ լեղած հեռավորությունից։

Շաքարի ճակնդեղի յեկամտի հաշվառումը, վոր կատարել և Տիմիրյազելի Գյուղատնտեսական Ակադեմիայի Գիտական-հետազոտական ինստիտուտուաց, ցույց է տալիս, վոր հացահատիկների միջին սովորական գների գիմաց՝ շաքարի ճակնդեղը, նույնիսկ բերքը ցածր լինելու գեպում, կարող է ավելի արժեքավոր լինել, քան բոլոր հացահատիկներն ու բազմաթիվ տեխնիկական մշակույթները (արեգածաղիկ, կարսոնֆիլ, կտավլախոտ, ծխախոտ և այլն)։ Ցանքսի ծախքերի չափը վորոշելիս, ընդունվել է՝ ձիու բանվորական որվա-արժեքը 1 ռ. 20 կ., տղամարդու աշխատանքը 60 կ., կնոջը՝ 45 կ., դեռահասինը՝ 35 կ.։ Ճակնդեղի գինը ընդունվել է (դրամով) 1 ռ. 28 կուզ. ցենտները։

Ահա թե վորքան են յեղել շաքարի ճակնդեղի յեկամուներն ու ծախսերը միջին յուղացիական տնտեսություններում։ Ծախսի և յեկամտի չափը վորոշելի է՝ կախված բերքից, հեռավորությունից և վատնված աշխատանքից։

№	Ծ Ա Խ Խ Ս	Բ. կ.	№	ՅԵԿԱՄՈՒՏԸ	Բ. կ.
1.	Ամոբակեղացիա*) և շենքերի ու ինվենտարի մասին նորոգում	10,76	1.	Ճակնդեղ 106 1/2 ցենտներ.	
2.	Ամորտ. և ցանքի նորոգ.	1,30	2.	«Գիշ» արժեքը, 38 ցենտ.	7
3.	Սերմեր 36 կգ., 36 1/2 կ. կգ.	12,04	3.	Քուապի արժեքը, 70 ցենտներ, 9-ական կուզ.	6,30
4.	Գյուղատնտեսական հարկ.	3 —	4.	Մաթի արժեքը՝ 1 ցենտն.	3,25
5.	Ապահովագոր. և այլ հարկ.	2 —	5.	Սերմեր 33 կգ., 36 1/4 կ. կգ.	12 —
6.	Գոմազրի արժեքը 56 ցեն.	1,68	6.	Սուպերփոսֆատ	10,40
7.	Սուպերփոսֆատի արժեքը	10,40	7.	Վնասատուների գեղ կովելու միջոցներ	2 —
8.	Վնասատուների գեղ կովելու միջոցներ	2 —	8.	Ամոբակեղ. և (գործարանային) ցանքի բեմոնտ .	1,30
9.	Մարդկանց աշխատանքի արժեքը	68,19	9.	Կոսպերացիայի ոգտին հատկացութենք	8,19
10.	Զիերը (յեղների) աշխատանքի արժեքը	57,64			
	Բնդամենը	169,01		Բնդամենը	187,25
	Զուտ ոգուտ	18,24			
	Բաւանս	187,25			

*) Ամոբակեղացիան մաշվածքի արժեքն է Որինակ, յեթե ցանիը 10 տարի ցենտուալում և արժի 150 ռ., նոր ամոբակեղացիան կլինի տարեկան՝ 150 : 10 = 15

Այս հաշվին պետք է տալ հետեւյալ պարզաբանությունը: Ծախսեմի քանի հոգվածները կրկնվում են յեկամտի մեջ, այսպես, որինակ՝ ամուրտիդացիան և ցանիչի ռեմոնտը, սերմերի, պարարտացումների վնասաւատումների դեմ կովելու միջոցների արժեքը: Յեկամտի մեջ այդ հոգվածները մտցված են այն պատճառով, վոր շաքարագործարանը այդ ծախսերը վերադարձնում ե գյուղացինքերին կոնտրակտացիայի ժամանակ: Հոգուտ կոռպերացիայի հատկացումները՝ դրանք այն հատկացումներն են, վոր տալիս ե շաքարի արդյունաբերությունը ճակնդեղային կոռպերացիային: Չուտ ողուտ շաքարի ճակնդեղի հաշվով, ինչպես այդ տեսնում ենք աղյուսակից, ստացվում է՝ 18 ո. 24 կոպ.: Սակայն գյուղացու տնտեսության մեջ ողուտուանհամեմատ ավելի մեծ ե, վորովհետև այդ «զուտ ողտին» պիտի ավելացնենք մարդկանց և լծկան անասունների աշխատանքի արժեքը:

1925 թվի պայմաններում, յերբ գյուղացիական տնաեսություններում բոլոր մշակվող բույսերից բարձր բերքեր ելին սասացվել (ճակնդեղից՝ 167 ցենտներ, հացահատիկներից՝ մինչև 8,5 ցենտներ) և հացահատիկների զները բարձր ելին, այսուամենայնիվ կենտրոնական-սեփահող նահանգներում ճակնդեղը ավելի լավ եր վարձատրում աշխատանքը, քան վորեւ այլ մշակույթ: Մինչդեռ ճակնդեղը բանվորական որը վարձատրում եր 1 ոուրլի 54 կոպեկով, կարտոֆիլլ տալիս եր՝ 1 ո. 37 կ., տարեկանը՝ 1 ո. 25 կ. և արեվածաղիկը՝ 1 ո. 6 կոպ.:

ՀԱՅԱՍՏԱՆԻՒՄ (Ի. Ի. Մակարեվիչի լրացումը)

Նկատի առնելով այն հանգամանքը, վոր մեր ճակնդեղացան (լեռնականի և լոռու) շրջանները ընդհուպ կցված են յերկաթագծին և ճակնդեղի ցանքսերը շատ ել հեռու չեն նրանից, ճակնդեղից ստանալիք յեկամուտը բացառապես կախված է բերքից և մշակման համար բանվորական ույժի վրա կատարված ծախսի քանակից:

Առութի: Յենթադրենք, վոր մի տարվա մեջ ցանիչով 50 հեկտար հող և ցանվում այն ժամանակ ամեն մի հեկտարի վրա ամորտիդացիայ յի գալիս՝ 15 ոուրլի, 50 հեկտ. = 30 կոպ.: Նույն ձեռք կարող ենք ստանալ ամորտիդացիան ամեն մի մերենայի, բանվոր ձեռք, չենքի և այն:

Ամորտիդացիան պետք է հիշած հաշվելու համար, պետք է հայշել նաև այն տոկոսը, վոր կվճարեր բանկը, յեթի մենք մուծած լինելինը նրան մեր փողը, վոր ծախսել ենք մերենայի վրա:

Մինչև վոր ճակնդեղացան աղբարմակությունը չի յուրացնի այս նոր մշակույթը խնամելու տեխնիկան, անխուսափելի յեն բանուժի վրա ծախսերը ավելի մեծ չափով, քան այդ պահանջում ե մշակույթը: Յերբ գյուղացին հեկտարից կ'ստանա մոտ 190–200 ցենտներ բերք (իսկ այդպիսի բերքին նա մտուակա տարբիներում կհասնի), և յուրաքանչյուր հեկտարին կըպահանջմի 90 բանվոր, որեկան աշխատավարձը կըլինի մոտ 2 ոուրլի, այսինքն՝ ավելի բարձր, քան վորեւ ուրիշ մշակույթի դեպքում:

Այն, ինչ վոր Պ. Գրացիանովը ասում է շաքարի ճակնդեղի տնտեսական նշանակության մասին գյուղացիական տնտեսության մեջ, աչքի առաջ ունի ճակնդեղացանքի հին շրջանները և մեր Միության կենտրոնական-սեփահող նահանգները: Յնուամենայնիվ այդ բուլութին վերաբերում է և Հայաստանին: Պետք է միայն նշել այս տեղ, վոր Հայաստանում գաշտերը ավելի ևս աղբոտ են, հացահատիկների թիվը՝ ավելի սահմանափակ և բուլութին բացակայում են մշակույթներ շաքարահերկ հողաբաժինների համար, ուստի և շաքարի ճակնդեղը մի բախտավոր «գյուռ» և դառնում այն տեսակետից, վոր գյուղացու անսիստեմ տնտեսությունը դրվում է կողեկտիվացման և ցանքաշրջանի ոելսերի վրա:

Բացի այդ, վոչ պակաս տնտեսական արժեք ե ներկայացնում այն համագամանքը, վոր Հայաստանում ուրիշ ըրջանների հետ համեմատած ավելի շատ «գիչ» (տերելիներ) և ստացվում է ավելի բարձր կերի վորակով:

Յեթե Միության այլ վայրերում մի ցենտներ ճակնդեղից՝ միջին հաշվով ստացվում է մոտ 12 կտ. շաքար, հայկական ճակնդեղը ցենտներից տալիս է 17 և ավելի կտ. շաքար. և հենց զրա մեջն է նրա մեծ արնական նշանակությունը:

Բնդգծելով, վոր անժամանակ և անիմամ մշակումը կարող է կոռուպտելով, անժամանակ և նաև ավելացնել, վոր անժամառը մատնել դաշտը, անհարաժ զրումն ևս, մանավանդ յեր դրան չի հաջորդում թոխնակ և անիմամ զրումն ևս, մույնական կարող է աղետալի հետեւանքի հասցնել ցանքը, նույնական կարող է աղետալի հետեւանքի հասցնել ցանքը:

Գալով գեֆեկացիոն կեղտի կիրառմանը ճակնդեղի համար, կարել լի յենթադրել, վոր այդ պարարտանյութը դրական ներգործում չի մերժական կերպության հարթավայրի հողերը չեն կարող դասվել լի թիվս սակավականի հողերի:

17 ՇԱԲԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ՄՇԱԿՈՒՅՑԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ-ՍԵՎԱՀՈՂ մարզի և հարավ-արեվելյան քնտվողյան յերկը տնտեսությունը բացառապես հացահատիկների մշակման վրա է հիմնված: Վիճակադրական տվյալներով հեղափոխությունից առաջ այս ըրջաններում հացահատիկները (ցորեն, տարեկան, գարի, հաճար և այլն) ցանքահողերի ավելի քան 80 տոկոս ելին դրավում: Վարեկահողի յերրորդ մասը ընդ ոմին հանդասանում էր: Մշակույթների մեջ յեղած այդ փոխարարելությունը քիչ է փոխոխվել ներկայումս:

Մշակող բույսերի միորինակությունից հողը միակողմանի կերպով մաշվում, ուժասպառ և լինում, վորովհետեւ բոլոր հացարույշերը, բոլոր հացահատիկները քամում են հողից միհնույն սննդարար նյութեղենները: Եկատի ունենալով զոմալրի պակասը, հանքային պարատացուցիչ տուկերի բացակայությունը գյուղացիական անտեսություններում, յերկրագործական գործիքների շատ վատ վորակը, այդ տեսակ միորինակությունը սպասում է մշտական հացալակառ բերքով և ծանր հետեւանքներով:

Միմիայն հացահատիկներ մշակելիս, անտառների կերը միշտ կպակասի:

Իսկ առանց կերի չի կարելի զարգացնել անտառաբուծությունը, ունենալ լծկան և արդյունավետ անտառներ անհրաժեշտ քանակով և առանալ շատ զոմալր:

Յերբ անտառները հաղիկ-հաղ են բավարարում տնտեսության կարիքները, նրանք կերակրվում են բացառապես կոչտ սակալասնունդ կերով՝ ծղոտով և հացահատիկների մղեղով: Այս և պատճառը, վոր կովերը քիչ կաթ են տալիս, վոչխարները՝ քիչ բուրդ և քիչ միս, լծկան անտառներ՝ ձմեռված ժամանակ նիհարում և ուժասպառ և լինում:

Այն ինչ կենտրոնական-ՍԵՎԱՀՈՂ մարզի և Վորոնեժի, Տամբովի, Պենզայի և Սարատովի սելահող զաշտերի ճոխությունը, թարմությունը, խորությունը, արեգակի լույսի առանությունն ու ամառվա տաքությունը թույլ են տալիս դաշտային անտեսության մեջ բացի հացահատիկներից մտցնել բազմաթիվ արժեքավոր պարենավոր, կերային և արդյունաբերական բույսեր: Այդպիսի մշակույթների մեջ ճակնդեղը առաջին տեղերից մեկն է բռնում:

Անհրաժեշտ և շաբարի ճակնդեղի մշակումը ընդարձակել:

Մշակումը հաջող լինելու համար, շաբարի ճակնդեղը պահանջում է ճողի, սեղ, ցորենի հողեր, վորպիսիներով հարուստ են Կենտրոնական-Սեվահող նահանգները և ամբողջ հարավ-արեվելքը: Մինչև անգամ Սարատովի նահանգը, բացի Վոլգայի գծով տարածվող նեղ գետափյա շերաբից և աննշան ըրջաններից հարավում և հյուսիսում, կատարելապես հարմար է հանդիսանում շաբարի ճակնդեղը հաջող մշակելու համար:

Սարատովի նահանգի կլիման թույլ է տալիս ստանալ այստեղ շատ լավորակ հումք շաբարագործարանների համար:

Փորձը ցույց է տալիս, վոր ճակնդեղի բնդհանուր բերքը այստեղ պակաս չի լինի, քան հարավ-արեվմայան նահանգներում: Կոստիլի յելիսովին վատահ լինել, վոր այստեղ հեկտարից 150-200 ցենտներ արմատ կտացնի:

Սարատովին ստհմանակից Տամբովի, Պենզայի և այլ նահանգներում, վորոնք կենտրոնական-ՍԵՎԱՀՈՂ ըլֆանի մեջ են մտնում, ճակնդեղը գրեթե արգեն 100 տարի յէ, վոր մշակվում է: Նույնիսկ, յերբ հողերը ամենահարավար կերպով են մշակվում, ցանքսերը վատ են խնամվում և գրեթե բոլորովին չեն գործադրվում վոչ գոմալր և վոչ հանքային պարաբանյութեր, ճակնդեղի բերքերը քանակի տեսակետից ցածր չեն, քան աշտակյա և ձախակյա Ուկրայինայի մարզերում և պակաս ել չեն շաբարատության կողմից:

Շաբարի ճակնդեղը մի մշակույթ է, վորը շատ զգայուն և պարարագան հանդեպ, պահանջելով միատեղ հողի լավ մշակում և կանոնավոր ինամք իր աճման ժամանակաշրջանում: Նա կոսովորեցնի յերկրագործին պարարագաներ իր զաշտերը վոչ միայն գոմալրով, այլ և հանդիսական գաշտերով, վորոնց բնակչությունը առայժմ դեռ շատ քիչ և ծանոթ: Վորքան բարձր և կուլտուրական և լինում անտեսությունը, այքան նու շատ և ոգտվում պարաբանյութերով. միայն դրա չնորդիվ վոր արտասահմանյան, մեղ սահմանակից յերկրագործների տնտեկ, վոր արտասահմանյան, մեղ սահմանակից յերկրագործների տնտեկ:

Թե ինչպես են բարձրացնում պարարատանյութերը շաբարի ճակնդեղի բերքը, մենք դրա մասին արգեն խոսել ենք:

Սովորեցնելով բնակչության արհեստական պարարատանյութերի գործածությունը, շաբարի ճակնդեղը միաժամանակ ընտելացնում է դրան և հողի կանոնավոր մշակմանը:

Ապրելով հարուստ և գեռ բալորովին չքամված հողերի յերկրում, մեր հացացան-հողատերերը շատ անխնամ են վերաբերվում դյուզատընտեսական աշխատանքներին։ Հողը հերկվում է անժամանակ, անփույթ, անկոնոն. դաշտերը չափազանց աղտոտված են, քաղհանն ու թորիոր շատ անդամ բոլորովին չի կիրառվում, ուստի և մեր առատ հողերի վրա հաճախ ավելի շատ աղբարտույթ է ածում, քան հացահատիկ։

Բախական է տեսնել, թե կենտրոնական-Սևկանող մարզում ինչպես է մշակվում բավականին տարածված արևածաղիկը, վորաբեսղի հասկանանք հողատիրոջ անփութությունն ու անհոգությունը. բույսերը ցանվում են անկանոն շարքերով, շարքերի մեջ նրանք թողնված են կույտ-կույտ, մի-մի քանի բույս մի բնի մեջ, բների միջի տարածությունները փոքր են, շարքամիջերը անմշակ ու աղբոտված։ ամբողջ գաշտը ծածկված է թույլ, նիշար, ընկճված բույսերով, ուստի և արեգածադիր բերքը միշտ ցածր է և տարեցարի ընկնում է։

Յեթե արևածաղիկը, վորը այնքան ել կարող չել խնամքի և կանոնավոր մշակման, այնուամենայիշիլ տուժում է այդ տեսակ անփույթ վերաբերմունքից, ավելի ևս զգայուն է այդ կողմից շաքարի ճակնդեղը։ Յեթե արևածաղիկի բերքի կորուսը այդ գեղիքում հաշվում են 1,5-2 ցենտներով, վոր մոտ 15-20 ուռելի արժեն, ճակնդեղի գաշտերի անժամանակ և անփույթ մշակումը մի քանի 100-ական ուռելու կուսատ է տալիս։

Շաքարի ճակնդեղը ավելի արժեքավոր արտադրանք է տալիս, քան վորեն ուրիշ մշակույթ։ Շաքարի ճակնդեղի յուրաքանչյուր ցենտները՝ առնվազն 12-18 կգը. շաքար է տալիս։ Համաձայն փորձնական դաշտերի և կայսների հետազոտությունների, միայն 5-6 որով, զորորինակ, ճակնդեղի գաշտի սուածին թոխումը ուցացնելուց՝ հեկտարից շաքարը պակաս է սուածում մոտ 180-230 ուռելի գումարով։ Միաժամանակ ինքը հողատերին և ճակնդեղից 40-50 ուռելի պակաս կ'ստանա։ Շաքարմիջի անժամանակ կատարած մշակումը, ճակնդեղի անկանոն և անփույթ ցանցառացումը հաճախակի լիակատար կորստի յեն մատնում դաշտը։ Այդ բոլորը շատ շուտ հաջի կառնի դյուզացին և կընտելանա հողը ժամանակին լավ մշակելուն։

Ճակնդեղի մշակումը կարեվոր է նաև այն աեսակեալից, վոր այր մշակման ժամանակ ավելի կանոնավոր և բաշխում և ողտագործվում բանվորական ույժի աշխատանքը։

Հացահատիկի ցանքսերի համար ընդունված յեռադաշտի պայման-ներում բոլոր դաշտային աշխատանքները կուտակվում են մի բավականին կարծ ժամանակամիջոցում, սովորելով անշափ ուժեղացնել աշխատանքի լարվածությունը։ Գարնանային աշխատանքներից հետո գոյանում են աղատ ժամանակի շրջաններ, յերբ վոչ մի տեղ և վոչ մի զործի համար չի լինում ողտագործել բանվորական ույժը։ Դաշտի մշակության մեջ մտցնելով շաքարի ճակնդեղի մշակույթը, առաջին աղատականից ժամանակի մշակումը աշխատանքով և այլ աշխատանքը ավելի համաչափ է դասավորվում տարվա ընթացքում։ Ճակնդեղի դաշտերի մշակումը պահանջվում է ցել անլուց աղատ ամբոներին՝ մայսին, հունիսին. ճակնդեղի հավաքումը յեկ գաշտից դուրս կրելու կատարվում և սեպտեմբերին, հոկտեմբերին, յերբ հացը հավաքվել և արգեն և կալսվել։

Վոչ միայն գյուղացին ինքը, այլ և ամբողջ նրա ընտանիքը գրադարձարի կլինեն վողջ ամառը, ըստ վորում աշխատանքը ավելի բարձր վարձարված կլինի, քան գրառում աշխատելու զետքում։ Զհաշված ցանքսի, հավաքի յեկ բերքը գուրս կրելու աշխատանքը, միայն ճակնդեղի ցանքսերին խնտությունը համար նրա անձման ժամանակ կ'ուտանչվի 45-70 բանվորական որ ամեն մի հեկտարին, ըստ վորում շատ աշխատանքների համար հաջողությամբ կ'ողտագործվի յեկ յերեխաների աշխատանքը։

Շաքարի ճակնդեղի մուծումը կանոնավոր ցանքաշրջանների մեջ մանավանդ անհրաժեշտ է սակավահող շրջաններում։ Փոքրիկ հողատիրները, ճակնդեղը մտցնելիս, կ'պահանջնեն այնքան աշխատանք, վորքան հազիվ կարողանա տալ յերկրագործի ընտանիքը։

Ցանքաշրջանի մեջ ճակնդեղը մտցնելու գեղքում, չի նվազի և հացի քանակը, վոր ստանում է յերկրագործը, վորովհետեւկ՝ թեև հացատիրների ցանքսերի տարածությունը կրծատվում է, սակայն բերքը՝ բազմադաշտի և պարարտացման հետեւնքով, աճում է։

Ուկրայինայի շաքարագործարանների մոտ գտնվող գյուղացիական ցանքսերի հետաղոտությունը ցույց է տալիս, վոր այն դեպքում, յերբ չմուծվել են ճակնդեղի ցանքսերը և դրա հետեւնքով կրծատվել հաշահատիկների ցանքսերի տարածությունը, հացահատիկների ընդհանուրը բերքը տնտեսության մեջ չի նվազել, իսկ տնտեսության յեկանաւության բարձրացնել է։

Վոր ցանքսափոխություններում ավելի լավ և ճակնդեղը մշակելը, այլ մենք մանրամասնորեն ցույց տվինք ցանքաշրջաններին նվիրված էնթուսիամ:

Շաքարի ճակնդեղի մուծումը տնտեսության մեջ պետք է լավացնի նաև անասնաբուժությունը, վոր յերկրագործի տնտեսության հիմնաքարն է: Շաքարի ճակնդեղը անասնին տալիս է մի կեր, վոր անհամեմատ լավ և ծղոտից և գարմանից: Ճակնդեղի տերեները ու կառուտանքը (յերբ բերքը հայլաքում և պատրաստում են զործարանը փոխադրելու) ընտիր կեր են ծառայում յեղջյուրավոր անասունների, վոչ խարների և խոզերի համար:

Շաքարագործարանից մոտիկ ապրող հողատերերը բացի այդ կողմէն կերի համար շաքարի արտադրության թափթփություններով՝ քուսպով և մաթով (պատոկայով): Քուսպը (ոսերեն «ժոմ»-ը) ներկայացնում է ճակնդեղի կորուլածքը, վորից քամված և ամբողջ շաքարը. մաթը՝ շաքարի և մի քանի այլ նյութեղենների խառնուրդ է: Քուսպը մի շատ հեղուկ մասսա յե, վորի փոխագորությունը շատ դժվարին է: Նա պահպում է բաց փոսերում և պահվելիս դրեթե չի կորցնում իր համի սննդարարության առավելությունները: Այսպես կոչված թթու քուսպը, վորը ամբողջ ձմեռը մնացել է պահված, անասունը ուտում է ավելի մեծ ախորժակով, քան թարմը: Մաթը, իրենի արժեքավոր մի մթերք, կարելի յե փոխագրել և հեռու տեղեր: Քուսպը կարելի յե նաև չորացնել. այսպիսի դեպքերում նրան աղյուսի ձեվ են տալիս: Չորացրած՝ ձեռնոտու յե այլպիսին փոխագրել զործարանից հեռու դըմնող տնտեսությունները: Չորացրած քուսպը, լուծված ջրի մեջ և մաթով համեմած, բոլորովին չի տարբերվում թարմ քուսպից: Քուսպի չորացումը հաճախակի կատարում են՝ այլպիսին մաթով համեմելով:

Թե՛ քուսպը թե՛ մաթը կերի տմենալնտիր տեսակներիցն են. վաղուց ի վեր նրանք ճակնդեղային շրջաններում գործ են ածվում վոչ միայն իբր հասարակ կեր, այլ և յեղջյուրավոր անասունների վորակյալ կերակուր, հենց այնպես, ինչպես ողու գործարաններում կերակրում են անասունը ողու տականքներով, «տիլով» (ոսերեն «բարդա»): Հաղարավոր ցլեր և տասնյակ հազարավոր վոչխարներ չյուսիսային Ամերիկայում ամեն տարի կերակրվում են ճակնդեղի քուսպով: Ճակնդեղի քուսպը անասուններին ուտեցնելու փորձերը ցույց են տալիս, վոր հաղիվ թե քանիվ մի ուրիշ կեր, ավելի հժան, համեղ և շահագետ, քանի յե, գործ է ածվում կերը. իր ծառայությունը կատարած կերը, մի

թթու քուսպը: Զոր քուսպը իր սննդարար և համի արժանավորություններով կարող է լիովին փոխարինել թարմ ճակնդեղի կերը, չգերազանցելով այլպիսին գնի կողմից:

Ճակնդեղի մաթը, կամ «մելլասսա»-ն դործ է ածվում վոչ միայն քուսպի համը և սննդարարությունը լավացնելու համար, այլ կիրառվում է նաև ծղոտի կառուտանքը, թեփը համեմելու նպատակով: Քուսպը և մաթը ավելի լավ միտ են տալիս, քան ողու տականքը, «բարդան»: Միջին արտադրողականությունն ունեցող շաքարագործարանը, վորն որական 6000-ից մինչև 8000 ցենտներ ճակնդեղ է վերամշակում, կարող է արտադրության ժամանակամիջոցում տալ մինչև 5000 տոնն քուսպ և 2-2,5 հազար տոնն մաթ: Այս մթերքների այդպիսի ահազին քանակությունը կարող է բավարարել բազմաթիվ մանր աշխատավոր տնտեսություններին, վորոնք շաքարագործարանի չուրջը մեծ տարածության վրա յեն լինում ցրված:

Անասուններին թարմ կամ թթու քուսպը կերցնելու համար այլպիսին խառնում են ծղոտի կառուտանքին, կույսեր կազմելով նրանցից: Այդ կույտերը 2-3 որվա ընթացքում մի քանի անգամ տակն ու վրային անում թիւածե փայտով: Յերբ կերը լավ կիսառնվի և կույտերի մեջ կտաքանա, կերցնում են անասնին: Այդպիսի խառնուրդի մեջ նույնիսկ ծղոտը և փշավոր հացահատիկների թափթփուկը (ոսերն «պոլովա») հաջող կերպով ոգտագործվում է անտեսության մեջ:

Կերի քանակի շատացումը և վորակի լավացումը վոչ միայն կըլավացնի յեղած անասունների սննդով, այլ և կշատացնի վորոշ չափով լծկան և արդյունավոր անասունների թիվը: Անասունների ավելացումը և նրա սննդի լավացումը կնպաստի զոմազրի կուտակմանը: Յեթե այժմ մանր հողատերը, յեռագաշտի պայմաններում, անզոր և զտնվում պարարտացնելու իր դաշտի նույնիսկ կեսը, — տնտեսության նոր ձեվերին անցնելիս, ճակնդեղի մշակման պայմաններում, զոմազրի քանակը դրեթե բավական կ'լինի, վորպեսզի պարարտացնի վողջ ցելուտատեղը: Գոմազրի վորոշ պակասը կ'լլացվի գլխավորապես հանքային պարարտանյութերով և նույնպես ճակնդեղի տնտեսության մեջ արդյունավոր անասունների ավելացումով:

Բացի կերից, շաքարագործարանը տալիս է, իբրեւ թափթփուկ, նաև պարարտանյութ: Դա այսպես կոչված գեֆեկացիոն կեղան է: Շաքարի հյութերը մաքրելու համար գործարաններում, ինչպես հայտնի յե, գործ է ածվում կերը. իր ծառայությունը կատարած կերը, մի

քանի այլ նյութեղենների հետ խառնված միասին, դեն ե գցվում և գոմազբի հետ խառնվելով լավ պարարտանյութ ե դառնում աշնանացանի համար, մանավանդ այնպիսի հողերի համար, վորոնք աղքատ են կիրով։ Դեֆեկացիոն կեղափ մուծումը իր աղղեցությունն ե անում նաև ձակնղեղի ցանքսերի վրա։ Պրոֆ. Ի. Վ. Յակուչինը Տամբովի նահանգի Նովոպոկրովսկի գործարանի և Վորոնեժի նահանգի Նիժնեկլիսլյայսկի գործարանի հողամասերի վրա դեֆեկացիոն կեղափ պարարտացման փորձեր ե կատարել։ Հեկտարին 2,5 ցենոն դեֆեկացիոն կեղամուծելիս շարքերի մեջ, ստացել ե հետևյալ արդյունքները՝ (հեկտարից ցենտներ)՝

	Առանց պարարտացման	Դեֆեկացիոն կեղամուծելով ցենտներ
1. Նովոպոկրովսկի գործարանը	138	165
2. Նիժնեկլիսլյայսկի գործարանը	102	141

Դեֆեկացիոն կեղար ամենալավ միջոցներից մեկն ե պարարտացմանը թթու ճահճացած մարդադետինները, ավաղակավ և աղախառն հոգերը։

Վերջապես, շաքարի ճակնղեղի թե՛ մշակույթը և թե՛ արդյունաբերությունը նշանավոր աշխատավարձ կտան տեղական բնակչությանը առանց տանից հեռանալու։

Յեթե ինքը բնակչությունը սկզբներում իր հողաբաժինների վրա դեռ քիչ կմշակի ճակնղեղ, դաշտային աշխատանքներից իր աղատ ժամանակը նա կդորժադրի գործարանի դաշտերը մշակելու վրա։ Բացի այդ, գործարանը ինքնըստինքյան մեծ կարիք ունի բանվորների։ Հարկավոր կդան բանվորներ՝ ճակնղեղը գործարանը տանելու, գործարանի համար զանազան բեռներ բարձելու և պարպելու և շաքարը ուղարկելու, պետք կըդան բանվորներ քուսալը, դեֆեկացիոն կեղար հավաքելու, վառարաններին վառելիք մասուցելու և այլն։ Զե վոր միջին արտադրողականության գործարանին 30-40 հազար խորանարդ մետր միայն ցախ ե հարկավոր և մինչեւ 16.000 տոնն քարածուխ, սպահանջմում ե հարյուրավոր տոնն կրաքար։ Գործարանը կ'տա 100-120 հազար ցենտներ շաքար, վորը պետք ե փաթաթել, տանել կայարանը և բար-

ձել։ Փաթեթման համար ամեն տարի կըծախսվի 200-250 հազար պարկ, վորոնց պատրաստումը տեղական բնակչությանը վորոշ վաստակ կ'տա և թերեվս նույնիսկ նպաստի տեքստիլ արդյունաբերության զարգացմանը գործարանի շրջանում։

Ահա այն ոգուտները, վոր կարող ե տալ շաքարի ճակնղեղի մշակումը և ճակնղեղի արդյունաբերությունը։

Այս բոլորից պարզ ե, վոր շաքարի ճակնղեղի մշակույթը և շաքարի արդյունաբերությունը կըկենդանացնեն յերկիրը, բազմակողմանի կ'լավացնեն դյուղատնտեսությունը, կ'բարձրացնեն բերքատվությունը, յեկամտի և վաստակի նորանոր աղբյուրներ կտան, իսկ այս բոլորը կըբարձրացնի տեղական աղգաբնակության բարորությունը և կ'նպաստի յերկրի ընդհանուր կուլտուրային։

18. ՃԱԿՆՂԵՂԻ ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՆ

Շաքարագործարաններում վերամշակվող բովանդակ ճակնղեղի ամենամեծ մասը ստացվում է դյուղացիության դաշտերից։ Յեթե նախահեղափոխական ժամանակաշրջանում ճակնղեղի դյուղացիական դաշտերը նախկին Ռուսաստանի ճակնղեղային ցանքսերի ընդհանուր տաքածության 20-22 տոկոսից վոչ ավել եյին կազմում, ներկայում 75 տոկոս են կազմում և տալիս են հումքի ընդհանուր քանակի մինչեւ 60-65 տոկոսը։ Գյուղացիական ճակնղեղացանքի նշանակությունը տարեցարի մեծանում է։ Գործարանների հողի տարածությունը մնում է նույնը։ սեփական ճակնղեղի քանակը, վոր նրանք ստանում են, կարող ե աճել միայն ի հաշիվ բերքի ավելացման։ Այն ինչ արդյունաբերության կարիքները աղգաբնակության և շաքարի սպառողության աճման գուգընթաց աճում են այնքան արագ, վոր շաքարի արդյունաբերության արտադրողականությունը չի հասնում սպառողության աճմանը։ Պարզ ե, վոր դյուղացիական ճակնղեղացանքի տարածությունը պիտի ընդարձակի նույնիսկ այն դեպքում, յեթե գյուղացիական դաշտերի բերքերը բարձրանան անպամ։

Գործարանների համար չափազանց կարելոր և ապահովել իրենց անհրաժեշտ հումքով, վորովհետեւ գործարանի թերարեռնվածությունից թանդանում ե արտադրությունը և առաջանում է շաքարի թանգությունը։ Այս պատճառով գործարանները նախապես միշտ համաձայնության են զալիս առանձին հողատերերի և նրանց միավորումների հետ (ընկերություններ, արտելներ) և կնքում նրանց հետ պայմանա-

զրեր (կոնտրակտներ) վորոշ առաջածությունը ցանելու և վորոշ մատավորապես լինելիք բերքը մատակարարելու մասին:

Սկզբներում՝ մինչև 1925 թիվը, շաքարի արդյունաբերությունը, յեթե գյուղացիների հետ կնքելիս և յեղել «Կոնտրակտներ» ճակնդեղը մատակարարելու մասին, ովհավորապես հողացել է, վորոշեղի ժամանակին ստացվի ճակնդեղի վորոշ քանակ:

Միայն 1925 թվից եւ, վոր «Սախարուրեսու»-ի կոնտրակացիան իրեն նպաստել է դուռը վոչ միայն հումքը պատրաստելը, այլև գյուղացու ճակնդեղացանքի ընդարձակելն ու լավացնելը:

Դրա համար անհրաժեշտ են ներգրավել, վորքան հանրավոր և, շատ գյուղացիական անտեսություններ, վորոնք դուրսարանի շուրջն են դաշնում, վարպեսպի նրանք իրենց մոտ կազմակերպեն ճակնդեղացանքը: Հարկավոր եւ սժանակել ճակնդեղացանք յուղացիներին, թե՛ վարդերով, թե՛ մեքենաներով, թե՛ պարարտանյութերով և ովհավորապես չքաշոր տնտեսություններին: Պետք է խոշորացնել գյուղացոց ցանքսերը, վերակառուցելով դաշտային տնտեսությունները, վափսինել ցանքաշրջանները, մացնելով նրանց մեջ շարքահերկ հոգաբաժին: Բացի այդ, պետք է կազմակերպել թշկան անաստաների և մեքենաների միասնական սպառագործումը և այլն: Այս բարորը կապված է լայն ագրոտեխնիքական և ագրիկուլտուրային աշխատանքի հետ: Այդ աշխատանքը պետք է տանեն մի ընդհանուր ծրագրով և համաձայնեցված ձեռով գործարանները, գյուղատնտեսական կոոպերացիան և հողային ժարմինները:

Վորոշեղի աշխատանքը պահանջափ լինի և ճակնդեղացանքը՝ կառնայոր, գործարանները կոնտրակացիայի պայմանագրեր են կնքում էլեկտրասութիւնների հետ՝ թՍՖԽՀ-ում՝ «Այելուցենոր»-ի, («Ճակնդեղակենտրոն»-ի), իսկ Ուկրայինայում՝ «Բուրյակապիլկա»-ի հետ:

Գյուղացիական պարմանագրերի հիմնական գրույթները մշակում են «Ճաքարատրեսոր» («Սախարուրեսու») և շաքարի ճակնդեղացին կոոպերացիայի վերոհիշյալ կենտրոնները («Սվելլոցենոր» և «Բուրյակապիլկա»):

Գլխավոր (ընդհանուր կամ գեներալ) համաձայնագրերը, ինչպես գերեւ սաված և, կնքում եւ կենտրոնում, պայմանագրերը՝ տեղերում, գործարաններին կից:

Գյուղացիական տնտեսությունների համայնացումը իրազործելու, այլ տնտեսությունները լավացնելու և վերակառուցելու նպատա-

կով, չաքարատնտեղային կոոպերացիան, վորի միջոցով՝ հարդարվում են հաշիվները գյուղացիների հետ, բացի պայմանավորված գրամական վճարից, սահմանավայրը և նաև տոկոսային հատկացումները, վորոնք ներկայաւում սահմանված են թուռասահմանում՝ 8,5 տոկոսի և թւկրայինում՝ 6,5 տոկոսի չափով, գյուղացիներին ճակնդեղի համար վճարված դրամական գումարից:

Այս փակերնով և, վոր կոոպերացիան պահում ե գյուղատնտեսներ, հիմունք և գյուղանտեսական կետեր, վարձակարաններ, կամքակերպում և վրուցներ, ընթերցանություններ և պաշնիթացքներ գյուղատնտեսների համար աշխատական հարցերի մասին և այլն:

Կոոպերացիայի աշխատանքից անկախ իրենք գործարաններն եւ անեն ագրարական սեփական անձնակազմ, կաղմակերպում և վարձակետեր և սերմագրիչ կայաններ, դասընթացքներ և դասուխոսություններ ճակնդեղացանք յուղերում և ամեն տեսակ ու անդակություն և անհետություն են ցույց տալիս ճակնդեղացանք գյուղերում: Այսպիս, սր.՝ գործարանները ձրի կամ եթան զներով բաց են թղթում տեսակախոր հացահատիկների սերմեր, չիմնում են բեղմնավորման կետեր, աղնիացել անտունների (ձիերի, կովերի, խոզերի) բուծարանները, ձիազուրկ գյուղացիներին մատակարարում են ձիեր և այլն:

Բացի այդ, բավարույն բերքի և ճակնդեղի կանոնավոր խնոմքի համար կաղմակերպված և ճակնդեղացանք հոգաբաժերի պարզեցարություն:

Շաքարի գործարանները ամենայիսանդուն կերպով մասնակցում են գյուղերի ներքին հոգացինարարությանը, հողոգտագործման լավագույն ձեռները սահմանելու յիշ կուեկտիվ տնտեսություններ կաղմակերպելու աշխատանքներին:

Ճակնդեղի կոնտրակացիան ընդգրկում է ամենամեծ չափով, և անդամ բացառապես, չքավոր և միջակ անտեսությունները: Խոշոր և ունիվոր հոգաբաժերի թիվը տարեցարի կրծատվում է:

Գրեթե վողջ ճակնդեղացանք ազգարնակությունը ներկայումս կոոպերացված է: Նա մանում է վոչ միայն ճակնդեղացին կոոպերացիայի, այլև ուրիշ կոոպերատիվ միավորումների մեջ (վարկային, ընդհանուր գյուղատնտեսական, սպառագական կոոպերացիա): Յերբ կ'կաղմակերպվի հատուկ ճակնդեղացին կոոպերացիան և նա բավականաչափ կ'ամրապնդվի, անկասկած, միայն նա յե սպասարկելու ամրոջ ճակնդեղացան ազգարնակությանը:

Միջին հաշվով, կոստերատիվ աշխատանքը ընդուրել է գյուղացիան մակնդեղացանքի հետևյալ տարածությունը (տակառներով):

1924 թվին	40 %
1925 »	80 »
1926 »	85 »
1927 »	96 »
1928 »	98 »

Ճակնդեղի կոնտրակտացիան սերտություն կապված է աղբիկուլտուր գործունեության հետ: Կոնտրակտացիայի սիստեմին 1927 թ. մասնակցող աղբոնմների քանակը յեզել է հետեւյալը՝

Գործարանների կողմից (գյուղացիական, ճակնդեղացանքի վարիչներ)՝ 159 աղբոնում:

Կոստերացիայի և հողային մարմինների կողմից (Ուկրայնայում):

940 աղբոնում:

Թուսատանում՝ 48 աղբոնում:

Կոստերացիայի և հողային մարմինների 1927 թվին կատարած կուլտուրա-տեխնիկական աշխատանքը արտահայտվել է հետեւյալում՝

1. Կազմակերպվել են 1278 կարճատեկի դասընթացքներ 56·566 ունկընդերով.

2. Անց ե կացվել 10·105 դասախոսություն 288·000 ունկընդերով.

3. Կազմակերպվել ե՝ 389 եքսկուրսիա 12·162 մասնակիցներով.

4. Կազմակերպվել ե՝ 224 ցուցահանդես.

5. Կազմակերպվել ե՝ 594 փորձնական հողարածին («Դելյանկա»).

6. Կազմակերպվել են՝ բյուջետային հաշվեկրություններ 324 տրնետեսություններում.

7. Հիմնվել են՝ 92 մեքենայական կետեր.

8. Կազմակերպվել են՝ 26 բեղմնավարման կետեր:

Բացի այդ, շաբարագործարանների աղբոնումները կատարել են հետեւյալ աշխատանքը՝

1. Ճանապարհների և կամուրջների նորոգման համար ծախսվել է 655·000 ռուբլի:

2. Զքավոր գյուղացիների սպնության ֆոնդը մուծված ե՝ 300·000 ռուբլի:

3. Կոստերացիային (բացի ուրինական հատկացումներից) տրված ե՝ 100·000 ռուբլի:

4. Ճակնդեղացանի մրցանակաբաշխումներում պարզեներ են ուղղվել՝ 100·000 ռուբլի:

5. Գյուղացիներին արվել են հացահատիկների ընտիր տեսակների ուերմեր՝ 564·000 ցենտներ:

6. Նորոգվել են գյուղատնտեսական մեքենաներ՝ 1589 սրինակ:

7. Գործարանների բեղմնակետերում բեղմնավորման և յենթարկվել՝ 16·500 անհասուն:

8. Վարձակայններից բաց և թողնվել՝ 13·000 գործիք:

9. Զքավորների համար ձրիաբար հող և վարվել՝ 3·343 հեկտար:

10. Գյուղացիների համար սերմ և զովել՝ 79·206 ցենտներ:

11. Անց են կացված դասախոսություններ, զրույցներ, ընթերցանություններ՝ 18·166:

Շաքարի արգյունաբերության աղբիկուլտուրային և ագրոտեխնիկական աշխատանքը սերտություն կապված է կոստերացիայի և հողմարմների աշխատանքի հետ և կատարվում է ընդհանուր պլանով:

Ճակնդեղի կոնտրակտացիայի և աղբիկուլտուրային աշխատանքի հետ սերտ կապակցությամբ անց ե կացվում ճակնդեղացան գյուղացիների կարճատեկ և յերկարատեկ վարկավորումը՝ (գյուղատնտեսական վարկային ընկերությունների միջոցով) կենաց կոնտրակտացիայի վերաբերյալ թե՛ղած գումարներից): Ճակնդեղի կոնտրակտացիայի վերաբերյալ թե՛ղած գյուղացիների համար պարմանապրերը և թե՛մի ճակնդեղացիայի համաձայնապրերը կնքում են մի տարվա ժամանակով: Այլքան յի համար ժամկետը շատ ել չի կարող նպաստել գյուղացու տնտեսության կարճ ժամկետը շատ ել չի կարող նպաստել դաշտագործության կարճ ժամկետը ականաները, վոր տրվում են պայմանագրերը կնքելիս, շատ փոքր են: Ուստի ներկայումս, առաջման փորձի ձեռով, սկսել են արգեն կերպությունները պարմանապրերը, սկսել են արգեն կերպությունները պարմանապրերը, և տարուց վոչ պակաս ժամանակամիջոցով, նկատի ունենալով քառակացական ժամանակաշրջանը:

Այսպիսի յերկարատեկ պայմանագրեր կնքելով, գյուղացին կարողանում է ամեն մի հեկտարին 100-120 ռուբլուց վոչ պակաս ավանս ստանալ, վորի վրա նա յուրաքանչյուր տարին պիտի ցանի ճակնդեղ, իսկ կոլլեկտիվ տնտեսությունները՝ մինչեւ 200 ռ.: Այլպիսի զումարը իսկ կոլլեկտիվ տնտեսությունները կ'առ հողատիրոջը լավացնելու իր կենդանի և անհարաբար ինվենտարը, իսկ գործարանները՝ կ'ապահովվեն հումքի վրայ քանակով՝ մի շաբթ սարիների ընթերցքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՐ (Ի. Ի. Մակարեվիչի լրացումը)

Լենինականի սովորողի (մոտակա ժամանակում «Մախոսվիսով»-ի) սահմանափակ տարածությունը հնարավորություն և տալիս ընդարձակելու ճակնդեղի ցանքսերը մինչև 1070 հեկտ., մինչդեռ, կառուցվելիք գործարանը աշխատանքի զցլեռ տարում, ճակնդեղի ցանքսերը պիտի կազմեն 4.000 հեկտարից վոչ պակաս։ Այսպիսով գյուղացիական ցանքսերը գործարանի կառուցման տարում պիտի կազմեն ճակնդեղի ընդհանուր տարածության 73 տոկոսը, իսկ հետագայում՝ գործարանին հումք հայթայթելու գործում՝ նրանց մասնակցությունը պիտի և արտահայտվի 85 տոկոսով։ Աւրեմն, Հայաստանի տառչին շաքարագործարանը կառուցվելու յեւ, չիմք ունենալով գլխավորապես զյուղացու ճակնդեղը։

Հայաստանի գյուղացիական տնտեսություններում անցկացվող ճակնդեղացմանությունը կրում է առաջմ արդյունաբերական ճակնդեղացմանության գործի բնույթը, ունենալով սահմանափակ չափեր, և կարեք չունի ներքրավիկելու հատուկ ճակնդեղացմին կոռպերացիայի մեջ, վորովհետեւ հերթի յեւ գրված կառուցվելիք շաքարագործարանի շրջանին հարող գյուղացիական տնտեսությունների համատարած կոլեկտիվացումը։

Ճակնդեղի ցանքսերը գյուղացիական տնտեսություններում անց են կացվում «պլանտատորային պայմանագրի» չիմունքներով, ինչը ևս և չին ճակնդեղացման ըրջաններում։ Ազրիկուլտուրային և աղբանականիքական աշխատանքի ճակնդեղացման ըրջաններում ներկայումս անց է կացվում հողարածինների գյուղատնտեսների ճեղքով և ԺՏԿՍ-ի համար լիազորի կողմից հրավիրված աղբանոմների աջակցությամբ։

19. ՃԱԿՆԴԵՂԻ ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Մեր շաքարի արդյունաբերությունը և ճակնդեղացմին կոռպերացիան ամեն տարի պայմանագրեր են կնքում գործարաններին ճակնդեղ հայթայթելու մասին։ Բնդհանուր համաձայնագրի կնքում են Գյուղմիությունը (Գյուղատնտեսական կոռպերացիայի կենտրոնը) և Սահմանադրությունը* (Շաքարի Արդյունաբերության կենտրոնը)։ Տեղերում ամեն մի գործարան պայմանագրի և կնքում ճակնդեղացմին կոռպերատիվ ժիությունների հետ։

*) Այժմ կոչում են «Այլուղախար»։

Ի՞նչ են տալիս այսուհան պայմանագրերը կոռպերատիվ հիմունքներով միացված գյուղացիներին։

Նախ և առաջ՝ Խ. Բուսաստանում միանձնյա տնտեսությունները ստանում են ամեն մի հեկտարին 30-ից մինչև 40 ռ. անտոկոս ավանս, վորի վրա նրանք ճակնդեղ են ցանում, իսկ կոոլեկտիվները՝ մինչև 50 ռ.։ Այդ գումարի մեկ քառորդը տրվում է հենց պայմանագրերը կնքելիս, մյուս քառորդը՝ ցանքսից առաջ, և կեսը՝ առաջին ծիլերը յերեալուց հետո։ Համարավի յի, թէ ինչ մեծ ոժանդակություն է դա գյուղացու համար գարունքին, յերբ տնտեսությունը սովորաբար զուրկ և լինում փողից։ Այդ փողերը հետագայում, աշունքին, հաշվի յեն առնվում, յերբ ճակնդեղը հանձնվում է գործարանին։

Յուրաքանչյուր ճակնդեղ ցանողը ցանքսից 2 շաբաթ առաջ, և ավելի վաղ, ձրի ստանում և գործարանից իր միության միջոցով ճակնդեղի սերմերը, հեկտարին 32 կրր։ Գործարանների բաց թողած սերմերը վորակով սովորաբար ավելի բարձր են, քան արտասահմանյան սերմերը։ Ներանք պիտի բավարարեն այսպես ասված «մազգերողյան» նորմաններին, այսինքն՝ նրանց տառովություննը պիտի լինի վոչ պակաս 73 տոկոսից, աղբանությունը՝ 3 տոկոսից վոչ ավել և խննագությունը՝ վոչ ավել 25 տոկոսից։

Բացի սերմերից, շաքարի գործարանը ձրի տրամադրում է հասուկ ճակնդեղացմանիներ, ցանքսի ամեն մի 30 հեկտարին մի-մի հատ։ Յանիչները չլինելու դեպքում, գործարանը ամեն տարի վճարում է ճակնդեղացմին միությանը 25-ական ոուրի ամեն մի չափած ցանիչի համար։

Վերջապես գործարանը միության միջոցով գյուղացիներին հայթայթում և սուպերֆուֆատ, վորոշ հաստատ գնով (0,213 կոպեկ ամեն մի կիլո-սուպոսին)։ Այս հաշվով 13 տոկոսային սուպերֆուֆատի ցենտները արժե 2 ոուրի 77 կ., սուպերֆուֆատը տրվում է այնպիսի քանակով, վոր հեկտարին ընկնի 2,5 կիլո ֆուֆորաթթու։ Յեթե գործարանը ժամանակին այդ սուպերֆուֆատը չի հասցրել, նա, համաձայն պայմանագրի, ճակնդեղացմին միությանը վճարում է կոռպերացիայի կամ պետական պահեստների միջոցով գնված սուպերֆուֆատի արժեքը։

Վնասատուները յերեալուն պիս, գործարանը ձրիաբար հայթայթում և ճակնդեղացմին միությանը թույներ և անհրաժեշտ սրսկիչներ,

իսկ չունենալու գեղքում նա միության գրամ և բաց թողնում այլպի-
սիները ձեռք բերելու համար :

Գործարանին հանձնված ճակնդեղի համար գյուղացին ստանում և
ցենաներին 1 ռ. 04 կ. : Բացի այդ, ամեն մի հանձնված ցենաները ճակն-
դեղի գիմաց գործարանը բոլորսին ձրիարար բաց և թողնում նրան 58
կիլորամմ թարմ քուսպ, և 845 գրամմ մաթ (պատոկա) :

Թարմ քուսպը ու մաթը շատ լավ կեր են կենդանիների, մանավանդ
մասու անասունների համար : Յեթև կոոպերացիան կազմակերպում և
կոոպերատիվ կերակրում, գործարանը, վորքան հնարավոր և, արամա-
րում և անասունների համար չենքեր, և՝ բացի ձրի բաց թողած քուս-
պից՝ վաճառում և նաև այլպիսին ամենաեժան զնով՝ ցենաները 10
կոպեկով : Քուսողը կարող և մերգել և պահպել ձմեռվա համար :

Վերջապես, այն գյուղացիներին, վորոնք ճակնդեղը գործարա-
նին հասցնում են 12 կիլոմետրից ավելի հեռավոր վայրից, գործարանը
ամեն մի կրկնակի հանձնված ցենաների համար վճարում և 15 կոպեկ
հո :

Բացի այդ ովուտներից, յուրաքանչյուր գյուղացին, վորը ճակնդեղ
և ցանում, ազգանումիական ողնություն և ստանում միության կողմից.
իսկ սպրոնումները իրենց վարձառությունը ստանում են գործարանից :
Գործարանը հատկացնում է ճակնդեղի համար վճարված բոլոր գու-
մարների մեկ տոկոսը ճակնդեղը ցանող գյուղացիներից լավագույննե-
րին պարզեատերելու համար :

Ահա թե ինչ են ստանում այն գյուղացիները, վորոնք միացված են
ճակնդեղային կոոպերացիայի մեջ :

Սակայն, անշուշտ, շաքարի արգյունաբերությունը, վորն այլքան
չահ և տալիս ճակնդեղային կոոպերացիային, իր կողմից ել առաջար-
րում և որան մի շարք պահանջները : Այդ պահանջները նպատակ ունեն
զիմայության գրդելու գյուղացիներին, վորպեսպի սրանք գործարանի
բաց թողած դումարները գործադրեն ճակնդեղացանքը դարպացնելու
համար :

Նախ և առաջ՝ ճակնդեղային միությունը, յեթե ամբողջովին չի
ցանել այն տարածությունը, վորի համար մող և ստացել, վճարում և
առայժմ՝ 5 ռ. 52 կ. ամեն մի հեկտարին : Սակայն այլպիսի առույթի
տեղի չեն ունեցել, և յեթե գյուղացին չի հանձնում ճակնդեղը, այդ
դեպքում նրա պարտքը (վերցրած ավանոր) փոխանցվում է մյուս տար-
վան, իսկ հաճախ ամբողջովին գեղջվում է :

Ազրոնամիական ողնությունն առահճովիլով ճակնդեղ ցանողներին
ճակնդեղային միության միջոցով, գործարանը պահանջում է, վոր-
տեսպի նրանք կատարեն մի շարք աղբոնումիական հրահանգներ և խրա-
ներ :

Այսպես, որինակ, գյուղացու հողը ճակնդեղի համար աշունքից
պիտի հերկվի 15 սանտիմետր խորությամբ : Բաց թողնված սերմերը
պիտի ամբողջությամբ ցանիված լինեն ցանիվներով, դաշտերում մշտա-
կան կոփկ մզգի մոլախոտերի և վնասատուների գեմ : Ճակնդեղի մշտա-
կան վերաբերյալ բոլոր աշխատանքները պիտի կատարվեն ժամանակին
և խնամքով : Գործարանի իր վերաբերյալ միջոցով իրավունք ունի բո-
լուուղիու ցանքափերի տարածությունը, հսկելու ցանքերին և բոլոր աշխա-
տանքներին :

Յուրաքանչյուր գյուղացի պարտավորվում է ճակնդեղի համար
իր հողը պարաբռացնելու սուպերֆոսֆատով 29,5 կիլո լուծելի ֆոս-
ֆորաթթեռուի հաշվով :

Յեթև անհրաժեշտ աշխատանքները դաշտերում չեն կատարված,
զործարանը իրանունք անի այդ աշխատանքները կատարելու ճակնդե-
ղային միության հաշվին : Այս ասթիվ ծագած բոլոր վեճերը քննում և
զործարանի, միության և հողային մարմինների ներկայացուցիչներից
կազմված հանձնաժողովը :

Յերբ դաշտերը փշանում են գյուղացու չնորհիվ (որինակ, ժա-
մանակին չ'կուցիւելուց), գյուղացին պարտավոր և վերապարհները ճա-
կնդեղի մշտակայիթի համար ստացված բոլոր գումարները : Իսկ յեթե
նրանք փշացել են անկախ գյուղացու անփությունից, այդ դեպքում
բաց թողնված ավանները հաշվի յեն առնվամ հաջորդ տարում, իսկ
սերմի արժեքը նույնիսկ բոլորովին զեղջվում է :

Սակայն պետք է ասել, վոր մինչեւ հունիսի 1-ը բոլոր դաշտերը
կարելի յե կրկին ցանել : Գործարանը այս պահանջը նույնիսկ մտցնում
է պարմանագրի մեջ և ձրիարար սերմ և բաց թողնում կրկնացանքի հա-
մար : Հատուկ կանոններ կան և գործարանում ճակնդեղը ընդունելու մա-
սին :

Ամբողջ բերքը գյուղացին պիտի հավաքած լինի մինչեւ հոկտեմբե-
րի 30-ը և, վորքան հնարավոր և, թարմ վիճակի մեջ տանի-հանձնի
զործարանին : Ճակնդեղը գործարանում բնակունվում է հողից, մազ-
մղուկներից և կողքի ճյուղերից զաված : Խսոսները պիտի դուրս կաըր-

ված-մաքրված լինեն մինչև սպիտակ միջուկը։ Գաղտաթը (տերելիները պիտի կորված լինի մինչև սպիտակ տեղը, պոչեկները՝ մի սանտիմետրացառությունը։

Յրտահար և փառած ճակնդեղը կարող է և չընդունի ինք:


Բնդէսմնըալես, յեթէ զյուզացին կառարել և զործարանի բոլ
պահանջները, ճակնդեղի բերքը մեծ չափով գերազանցում և միջին բեր
քից և զյուզացու յեկամուտը ածում և զգալի չափով:

ՀԵՆԻ սրանումն է կայանում շաքարագործարանի և կոռուկերացված զյուղացու մեջ յեղած կապի հիմքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՄ (ի. ի. Մակարեվիչի լրացումը)

Առայժմ, յերբ նախագծված շաքարագործարանը Հայաստանում դեռ չի բացված, կանարակտացիոն պայմանագրեր գյուղացիների հետ կնքում են անմիջապես ԺՏԳԽ-ի ճակնդեղացանության լիազորի կողմէց: Հետագայում, յերբ կոլխոզները սատրամարար կ'սկսն ամրանալ, պայմանագրերի կնքումը պիտի անցկացվի Համապատասխան կողմադիությունների միջոցով: Համաձայն մեր պայմանագրերի, բարողները անտոկս ավանսը ավելացված ե մինչև 80 սուրլի ամեն մէջ կտարին:

Հայաստանում ծաղող շաքարի արդյունաբերությունը նպաստ ունի հիմք զնելու զործարանի, խորհրդային անտեսության և կոլլեկտիվ անտեսությունների ամուռ արտադրական կապին, վորը նախարարական և հանդիսանում գլուզացիության անհատական տնտեսությունները վերակադրեն. Տաճարին գործությունը անհաջող է առաջանալ այս պահին:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Վորտեղից ե գայացել շաբարի նակնդեղը	3
2.	Ճակնդեղի տարածվածությունը և նրա բերքը	5
3.	Վորպիսի հողերի վրա պետք ե անեցնել նակնդեղը	9
4.	Հողերի պարարտացումը նակնդեղի համար	11
5.	Մուծելիք պարարտանյութերի ժամակը, միջոցներն ու ժամանակը	15
6.	Ճակնդեղի տեղը ցանքաշրջանի մեջ և ամենաճեղունու ցանքաշրջանները	22
7.	Հողի մշակումը նակնդեղի համար	33
8.	Սերմերի ընտրությունն ու պատրաստությունը և ցանելու նորման	42
9.	Շաբարի նակնդեղը ցանելու ձևերը	47
10.	Ճակնդեղի խնամքը նրա աճման ժամանակաշրջանում (փխրացում, սերիակացում, սոտոգում և վուոգում)	54
11.	Ճակնդեղի հասունանալը և հալաբը	63
12.	Ճակնդեղի բերքերը	70
13.	Ճակնդեղի ամենազլյավոր վնասատուները	72
14.	Ոգտակար կենդանիները և բռչունները	80
15.	Գյուղկոռպերացիան և գյուղացիական նակնդեղացանքը	81
16.	Շաբարի նակնդեղի շահալետությունը	85
17.	Շաբարի նակնդեղի տնտեսական նշանակությունը	88
18.	Ճակնդեղի կոնտրակտացիան	95
19.	Ճակնդեղի կոնտրակտացիայի պայմանագրերը	100



19.270

ՀԵՍԴ ԺՏԳԻՒ-ի հրատարակություններ՝

1. И. И. МАКАРЕВИЧ.— «Культура сахарной
свеклы в Армении», изд. 1930 г. цена
60 коп.
1. Տ. Կ. ԳՐԱՅԻԱՆՈՎ և Ի. Ի. ՄԱԿԱՐԵՎԻՉ.—
«Շաքարի ճականեղի մշակումը և նրա
տնտեսական նշանակությունը». հրատ.
1930 թ. գինը՝ 60 կոպ.:
-
-